


**mirtillo**

ԻՏԱԼԱԿԱՆ ՎԱՃԱՌԱՆԻՇԵՐՈՎ,  
ՓՈՔՐԵՐՈՒ ՀԱԳՈՒՍՏԵՂԵՆԻ  
ՆՈՐԱԲԱՅ ՎԱՃԱՌԱՍՈՒՆԸ

Jdeideh - Fanar, after Chalet Suisse  
Before Ste. Hripsimants Collège  
TéléFax: 01-876 060 Cell: 03-506 135  
www.mirtillo.com



# ԱԶՏԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

ازتاک - جريدة يومية سياسية وأدبية - الدورية للحوادث، إخبارية وشيخياك

1500 Լ.Ո. 76րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 231 (21573) ՇԱԲԱԹ, 13 ԳԵԿՏԵՄԲԵՐ 2003 10 ԷՁ

**ՔԱՆԱՏԱԿԻ ՎԱՐՋԱԿԵՆ ԺԱՆՔԻ**  
Քրեթիկ էրեկ հրաժարեցաւ, տաւր տարի շարունակ մնալէ ետք իր պաշտօնին վրայ: Հրաժարման պատճառներուն մասին ոչինչ հարորդեցաւ: Ելեմուտքի նախկին նախարար Փոլ Մարթին նշանակուեցաւ Քրեթիկի տեղ, դառնալով երկրին 21րդ վարչապետը: (ԱՖՓ)

## ԺՆՆԵՒԻ ՄԷՋ

### ՆԱԽԱԳԱՅ ԼԱՅՈՒՏ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՄ ՏԵՂԵԿԱՏՈՒՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՎԵՐԱԺՈՂՈՎԻ ՓԱՎՄԱՆ ՆԻՍՏԻՆ

Նախագահ Կոր. Էմիլ Լախուտ երեկ ժընեւի մէջ մասնակցեցաւ Տեղեկատուական Հասարակութեան Համաշխարհային Վեհաժողովի փակման նիստին: Նախագահ Լախուտի կողքին ներկայ էին նաեւ լիբանանեան պատուիրակութեան անդամները՝ նախարարներ Մարուան Համաւտէ, Ժան Լուի Քորտաիի, Քարիմ Բագրատունի, Նեժիպ Միքաթի, ինչպէս նաեւ Ֆրանսա-խօս երկիրներու Կապակերպութեան մէջ նախագահ Լախուտի ներկայացուցիչ տոքթ. Շարլ Ռըպը, լիբանանեան արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր տնօրէն Նաժի Ապի Ասի եւ Լիբանանի մէջ Չուիցերիոյ դեսպան Սամիր Հըպէյան: Նախագահ Լախուտ առաւօտեան նախագահեց լիբանանեան պատուիրակութեան գումարած յատուկ նիստին, որուն ընթացքին կատարուեցաւ ժընեւի մէջ գումարտու Տեղեկատուական Հասարակութեան Համաշխարհային Վեհաժողովին գնահատականը, ինչպէս նաեւ բանաձեւուեցան վեհաժողովէն քիւնիք հաղորդագրութեան մէջ լիբանանեան առաջարկներն ու կեցուածքները:


### ՎԱՐՋԱԿԵՆ ՀԱՐԻՐԻ ԺՈՂՈՎ ԳՈՒՄԱՐԵՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏԱՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՆ ՀԵՏ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երեկ վարչապետարանին մէջ ընդունեց Միջազգային Դրամատան Միջին Արեւելքի ներկայացուցիչ ժողովի Սապան, ներկայութեամբ ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Այուպ Հըմալէտի, ելեմուտքի նախարար Ֆուատ Մինիորայի, ուժանիւթի նախարարութեան ընդհանուր տնօրէն Ֆատի Քումէյրի, Վերաշինութեան եւ Բարգաւաճման խորհուրդի նախագահ Ժամալ Այթանի, ապապետականացման գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Դապի Եուսէֆի եւ վարչապետ Հարիրիի բարգաւաճման հարցերու խորհրդատու Ֆատի Ֆուապի: Հանդիպումին ընթացքին քննարկուեցաւ Լիբանանի մէջ ջուրի սարքաւորման հարցը: Վարչապետ Հարիրիի ներկայացուցման Միջազգային Դրամատան պատուիրակութեան Լիբանանի մէջ տարած աշխատանքները, ինչպէս նաեւ նշեալ պատուիրակութեան ունեցած հանդիպումներուն արդիւնքները: Վարչապետ Հարիրի նշեալ արդիւնքները, որոնք կ'ընդգրկեն ջուրի մատակարարման ծրագիրներ, արդիւնաբեր եւ տրամաբանական նկատեց, նկատել տալով, որ Լիբանանի մէջ հարկ է նման աշխատանքի մը ձեռնարկել: Հանդիպումին որոշուեցաւ, որ Մ. Դրամատան պատուիրակութիւնը մինչեւ յառաջիկայ Յունուար յանձնէ սկզբնական որոշ պատկերացում մը Լիբանանի մէջ բարգաւաճման եւ Վերաշինութեան աշխատանքին մասին, գործակցութեամբ ելեմուտքի, ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարարութեան, Բարգաւաճման եւ վերաշինութեան խորհուրդին, ինչպէս նաեւ ապապետականացման գերագոյն խորհուրդին: Բնարկուեցաւ նաեւ Լիբանանի քարիւղի ներածման հարցը: Մ. Դրամատան պատուիրակութիւնը պատրաստակամութիւն յայտնեց օժանդակելու լիբանանեան կառավարութեան, հասնելու համար մատչելի գինով քարիւղի ներածման հանգրուանին: Վարչապետ Հարիրի Քորաթեմի մէջ կէսօրէ ետք ընդունեց Միջազգային Դրամական Ֆոնտի մէկ պատուիրակութիւնը, նախագահութեամբ Օկիւսթին Քարաթընպի եւ ֆոնտի Միջին Արեւելքի տնօրէն Ժորժ Ապտի:

## ՊԱՆԵՍԻՆԵԻՍՏՐԱՅԵԼԵԱՆ ՏԱԳԱՊ


### ՇԱՐՈՆ - ԲՈՐԷՅ ՇԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԸ ՄՊԱՍՈՒԻ ԲՈԼՈՐԻՆ ԿՈՂՄԵ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն եւ անոր պաղեստինցի պաշտօնակիցը՝ Ահմէտ Քորէյ հաւանաբար հանդիպում ունենան յառաջիկայ շաբթուան մէջ, յայտնեցին երկու ղեկավարներուն մօտիկ աղբիւրներ: Շաբթուան երեկ իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն, նկատել ունենալով, որ Քորէյ հրաժարեցաւ նախապայմաններէն, որոնք կ'արգելակէին հանդիպումին կայացումը: Քորէյ հաստատած էր շաբթ մը նախապայմաններ, որոնց կարգին էր Իսրայէլի ապահովութեան պատին կառուցման ստեղծումը: Գահիրէի մէջ Իսրայէլի դեսպանը՝ Էլի Շեքէտ ըսաւ, որ Եգիպտոս յարգեցաւ համոզել Քորէյը, որ հրաժարի նախապայմաններէն՝ հանդիպումը իրականացնելու համար: Քորէյ իր կարգին երեկ հաստատեց, որ Շարոնի հետ տեսակցութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ շաբթուան մէջ: Քորէյ ղիտել տուաւ սակայն, որ Շարոնի հետ հանդիպումը եթէ արդիւնք պիտի չունենայ՝ աւելի լաւ է որ տեղի չունենայ: Ան աւելցուց, որ հանդիպումին արդիւնքը դրական պէտք է ըլլայ պաղեստինցիներուն եւ իսրայէլացիներուն համար: Իսրայէլի արտաքին գործոց նախարար Սիլվան Շալոմ, որ Ուաշինգթոն կը գտնուի ամերիկացի պաշտօնակիցին՝ Քոլին Փաուլիի հետ հանդիպումի մը համար, ըսաւ, որ Շարոն - Քորէյ տեսակցութիւնը պիտի ըլլայ նախաքայլը խաղաղութեան բանակցութիւններու վերսկսման: Շալոմ աւելցուց, որ այս հանդիպումին կարելի պիտի ըլլայ որոշել, որ Քորէյ իսկապէս խաղաղութեան ընկերակից մըն է, կամ ոչ: Մինչ այդ, Շարոն, որ մեկուսացուցած է պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատը, յայտնեց, որ իր կառավարութիւնը անմիջական ծրագիր չունի պաղեստինցի ղեկավարը արտաքսելու: Ան ըսաւ, որ պաղեստինցի ղեկավարը ապառ է որեւէ տեղ ճամբորդելու, սակայն սահկա չի նշանակել, որ Ռամալլա կրնայ վերադառնալ: Արաֆատ երկու տարիէ ի վեր բանտարկուած է Ռամալլայի կեդրոնատեղիին մէջ: Շարոն Արաֆատը պատասխանատու կը նկատէ իսրայէլացիներու սպանութեան: Ան ղիտել տուաւ նաեւ, որ Արաֆատ կը նախընտրէ Ռամալլա մնալ պաշտպանելու համար ահաբեկչական շարժումներն ու անոնց ղեկավարները:



Շարոն

● ՀԱՄԱՍԻ աւելի քան 20 հազար անդամներ ու հետեւորդներ ցոյցի մը մասնակցեցան Կապալի Ժապալիա գաղթականներին մէջ՝ նշելու համար իսլամական շարժումին 16ամեակը: Համա-սի ծնունդը յայտարարուած էր այս գաղթականներին մէջ: Շարժումին ղեկավարներէն՝ Ապտէլյապի Ռանթիսի խօսքը ուղղելով հաւաքուած բազմութեան, երդուեցաւ որ ոչ մէկ հրեայ պիտի մնայ պաղեստինեան հողերու վրայ: Ան կոչ ուղղեց Ժիհադի՝ ապստամբելու գրաւեալ հողերը: ● ԻՍԼԱՄԱԿԱՆ ԺԻՀԱԿՍ շարժումը երեկ ստանձնեց պատասխանատուութիւնը իր մըքը մը հրեաներու դէմ յարձակումին, որ տեղի ունեցած էր Նապլուսի մէջ: Յարձակումին վիրաւորուած էին եօթը հրեաներ: ● ԵԳԻՊՏՈՍԻ նախագահ Հիւսնի Մուպարաք յայտարարեց, որ լուրջ աշխատանք կը տարուի վերակենդանացնելու համար խաղաղութեան բանակցութիւնները պաղեստինցիներուն եւ Իսրայէլի միջեւ: (ԱՖՓ)



Զորէյ

### ԹՈՒՐԲԻՈՅ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԿԸ ՉԳՈՒՇԱՅՆԵ Ե. ՄԻՈՒԹԻՒՆԸ

ԱՆԳԱՐԱ, 12 (ԱՖՓ).- Թուրքիոյ արդարութեան նախարար ձեմիլ Չիլէք վզուշացուց Եւրոպական Միութիւնը, ղիտել տալով, որ անիկա քաջալերած պիտի ըլլայ ծախսալեղականութիւնը, եթէ որոշում տայ անդամակցութեան բանակցութիւններու չձեռնարկելու Անգարայի հետ: «Անատոլի» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Չիլէք իր խօսքին մէջ ըսած է, թէ Թուրքիա պէտք չէ Ե. Միութենէն դուրս մնայ, որովհետեւ նման քայլ մը մեծագոյն քաջալերանքը պիտի նկատուի ծախսալեղական շարժումներուն համար: Չիլէք ըսած է նաեւ, որ եւրոպական երկիրներ իրենք պիտենք բաց թիրախ պիտի դարձնեն արմատականներու յարձակումներուն դիմաց: Այս բոլորը նկատուի առած՝ Ե. Միութիւնը պէտք չէ սխալ մը գործէ Դեկտեմբեր 2004ին, երբ որոշում պիտի տայ Թուրքիոյ հետ անդամակցութեան բանակցութիւնները կատարելու, կամ մերժելու մասին: Թուրքիա կը պնդէ, որ ամբողջացուցած է քաղաքական բոլոր պայմանները, որոնք անհրաժեշտ կը նկատուին անդամակցութեան բանակցութիւններուն սկսելու:

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ ՏՈՒԱԾ ՄԱՍՆՈՅ ԱՍՈՒԼԻՍԻՆ

### ԱՐՄԵՆ ՌՈՒՍՏԱՄԵԱՆ Կ'ԱՆԴՐԱԳԱՌՆԱՅ ՓԱՐԻՉԻ ՄԷՋ ԿԱՅԱՑԱԾ Ե. ԽՈՐՀՈՒՐԴԻ ԳԻՏԱՐԿՄԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՆ

Հայաստանի Ազգային Ժողովի արտաքին յարաբերութիւններու մշտական յանձնաժողովի նախագահ, Հ. Յ. Գ. Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեան Հայաստանի Ազգային Ժողովին մէջ երեկ տուաւ մամլոյ ասուլիս մը, որուն ընթացքին անդրադարձաւ Դեկտեմբեր 9ին Փարիզի մէջ կայացած Եւրոպական խորհուրդի դիտարկման յանձնաժողովի նիստի քննարկումներուն: Ռուստամեան տեղեկացուց, որ «Եւրոպական կառոյցները մտահոգ են այն հարցով, որ Հարաւային Կովկասի մէջ գերպետութիւններու ազդեցութիւնը կ'ուճանայ»: «Նիստին ընթացքին արժարձուեցաւ Հարաւային Կովկասի մէջ Եւրոպական խորհուրդի դերին ճշման հարցը, որովհետեւ այդ դերը կը չի ընդհանրուած ընթացքին մէջ գերպետութեանց ազդեցիկ ներկայութեան», ղիտել տուաւ Ռուստամեան: Նիստին ընթացքին քննարկուած են Վրաստանի, Աբխազիանի եւ Ռուսիոյ ընտրական գործընթացները: Եւրոպական խորհուրդի յանձնարարական խորհուրդի մէջ կայանալիք նիստին ընթացքին պիտի յատկացուին Եւրոպական խորհուրդին անդամակցած երկիրներու պարտականութիւններու եւ հետագայ պարտաւորութիւններու հարցերը: Ըստ Արմէն Ռուստամեանի, եթէ Հայաստանին մասին տեղեկագիրը պիտի վերաբերի միայն Հայաստանի պարտաւորութիւններու կատարման, ապա Աբխազիանի մասին տեղեկագիրին մէջ նաեւ պիտի արժարձուի երկրին մէջ ժողովրդավարական հաստատութիւններու պարագան հետանկարի հարցը: «Աբխազիանի մէջ ոչ միայն չէ լուծուած քաղաքական բանտարկեալներու հարցը, այլեւ ընտրութիւններուն ընթացքին ձեռքբախուած 600 անձերէն 100ը տակաւին կը մնան բանտարկուած», ղիտել տուաւ Ռուստամեան եւ աւելցուց, որ դիտարկման յանձնաժողովի նիստին ընթացքին մտահոգութիւն յայտնուած է Աբխազիանի մէջ կայացած սահմանադրական փոփոխութիւններուն վերաբերեալ եւ կարծիք յայտնուած է, թէ «Աբխազիան հետպիտե կը վերածուի ոստիկանական երկիրի»: Հայաստանի պարտաւորութիւններուն անդրադարձալով, Արմէն Ռուստամեան ընդգծեց այլընտրանքային ծառայութեան օրէնքի ընդունումը: Ան ղիտել տուաւ, որ «Ետովայի վկաներ»ու գրանցման առնչութեամբ Հայաստան կրնայ զիջում կատարել միայն այն պարագային, երբ այս կայմակերպութիւնը իր կանոնադրութիւնը համապատասխան կը դարձնէ Հայաստանի օրէնքներուն:

## ՀԱՅՏԱՐ ԱԼԻԵՒ ՄԱՐԱՑԱՒ

Երեկ գիշեր, Աբխազիանի իշխանութիւնները պաշտօնապէս յայտարարեցին, որ Աբխազիանի նախկին նախարար Ալիեւ մահացած է Միացեալ Նահանգներու Քլիվլենտի հիւանդանոցին մէջ, որ 6 Օգոստոսէն ի վեր կը բուժուէր: Ան կը տառապէր սրտի եւ երիկամներու հարցէ: Հայտարարուեց 1993ին ընտրուած էր Աբխազիանի նախագահ եւ մինչեւ Հոկտեմբեր 2003 մնաց իր պաշտօնին վրայ: Անոր որդին՝ Իլիամ Ալիեւ յաջորդեց հորը՝ 15 Հոկտեմբերին կայացած ընտրութիւններուն: Ուրտուն տարեկան Ալիեւի մարմինը Աբխազիանի պիտի բերուի յառաջիկայ երկու օրերուն:





«ԱՂԲԱԼԵԱՆ - Հ. Մ. Ը. Մ.» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ

# ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՍԱՄՈՒԷԼ ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՅՈՒՄ



Երեկ երեկոյեան, «Աղբալեան - Հ. Մ. Ը. Մ.» Մարզամշակութային համալիրի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ տեղի ունեցաւ բացումը՝ արցախցի գեղանկարիչ Սամուէլ Գաբրիէլեանի գործերու ցուցահանդէսին, կազմակերպութեամբ Համապատասխան «Նիկոլ Աղբալեան» մասնաճիւղին. բացման պաշտօնական ժապատէնք կտրեց Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեան: Ներկայ էին Պուրճ Համուտի քաղաքապետը, հիւրեր եւ այլ անձնատուր թիւներ:



Գեկտեմբեր, ամէն օր առաւօտեան ժամը 11:00էն 21:00:

Սամուէլ Գաբրիէլեանի արուեստին մասին որոշ տեղեկութիւն ունենալու համար, անկախաբար ցուցադրուած գործերը տեսնելէ, կարելի է նաեւ գաղափար մը կապմել կարողալով անոր հարցազրոյցը՝ «Ազգակ»ին հետ, որ լոյս տեսաւ Ուրբաթ, 12 Գեկտեմբերի մեր թիւով: Նշենք, որ այս ցուցահանդէսին հասոյթը պիտի յատկացուի Արցախի մէջ կրթական-բարեկերական ծրագիրներու:

**ԾԱԽՈՒ Է**

Ոսկերչական թափ-ցուի մեքենայ մը, վաքրուծով եւ երկաթ սեղանով: Հեռ. 01-338376 եւ 01-338821:

**ԿՈՒՉՈՒԻ**

Հագուստի հաստատութիւն մը, մթերանոցի մէջ աշխատող պաշտօնէայի մը: Դիմել՝ հեռ. 03-304920:

**ԱՄՈՒՆԱՅԵԱԼՔ**

**ՏՈՔԹ. ԱՐԱ ՄԻՆԱՍԵԱՆ**

ընդ ՓԱԹԻԼ ԳԱԶԱՆՃԵԱՆ

29 Նոյեմբեր 2003 Տալլաս

**ՀԱՍԱԶՊԱՅԻՆ «ՈՌԻՔԵՆ ԶԱՐԿԱՐԵԱՆ» ՄԱՍՆԱՃԻՂԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Կը ձեռնարկէ Դասական երաժշտական գրոյց հանդիպումներու շարքի մը Յատկանշական գործերու ունկնդրութեամբ եւ տեսաերիզներու ցուցադրութեամբ Ներկայացնող՝ Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճի Դասախօս **ՊՐՆ. ՄԵԼԸՆ ՏԵՍԻՐՃԵԱՆ** Հանդիպումի միւթ՝ «ԵՐԱԺՃՏԱԿԱՆ ՍԵՌ ԵՒ ՉԵՒ» Երկուշաբթի, 15 Դեկտեմբեր 2003ին, երեկոյեան ժամը 7:30ին, «Ազատամարտ» ակումբին մէջ (Էշրեֆիէ):

**ԾԱՆՕԹ.** Հանդիպումները տեղի կ'ունենան երկշաբաթեայ դրութեամբ: **ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**ՍՏԱՅԱՆՔ**

**«ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻԻ Բ. ԵՒ Գ.**

**ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՆԵՐՔՈՂՆԵՐԸ**  
(Աստուածաբանական հեռանկարներ)

Հեղինակ՝ **ԹԱՄԱՐ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ**  
Հայաստանեայց Եկեղեցոյ Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունք  
Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ «Լոյս եւ Աշխարհ», թիւ 80  
Անթիլիաս - Լիբանան

**«ԹՈՒՉՆՈՅ ԲՈՅՆ» Ի ՕՐ**

«Թոչնոց Բոյն»-ի ծառայութիւնը աւելի կենսագործելու իմաստով, ու մանաւանդ հոն պատասխան գտած հայ մանուկներուն լաւագոյնս գոյրգոյրաւք ու հոգածութիւն ցոյց տալու համար, «Թոչնոց Բոյն»-ի տեսչութիւնն ու խնամակալութիւնը կ'ազմակերպած են «Թոչնոց Բոյն»-ի օրուան ձաշկերոյց մը, հովանաւորութեամբ ու նախագահութեամբ Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա. վեհափառ հայրապետին: Տեղի պիտի ունենայ Կիրակի, 14 Դեկտեմբեր 2003, կէսօրուան ժամը 12:00ին, առաւօտեան պատարագէն ետք, հաստատութեան սեղանատան մէջ:

Այդ առիթով տեղի պիտի ունենայ նաեւ հաստատութիւն, որուն հասոյթը պիտի յատկացուի «Թոչնոց Բոյն»-ին: Անոնք, որոնք կ'ուզեն տեղ ապահովել կրնան հեռաձայնել հետեւեալ թիւերուն. 09 - 540867 կամ 09 - 540027:

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Սեր սիրելի ժողովուրդի զաւակներուն կ'ուզենք յայտնել, թէ Ազգային Առաջնորդարանը ծրագրած է Լիբանանի Ազգային գերեզմանատուներու իրավիճակը կարգաւորել եւ բարեգործել:

Այս ծրագրին սկզբնական եւ կարեւոր բաժինը կը կազմէ դամբարաններու կալուածագիրներու ստուգումը եւ կարգաւորումը:

Բոլոր այն ազգայինները, որոնք Ազգ. գերեզմանատան դամբարանի կալուածագիր ունին, իրենց անուան կամ անմիջական հարազատին անուան եւ կամ հեռու բարեկամի մը անուան (բայց իրենց ընդ պահ դրուած) պարտին շրջանի եկեղեցոյ թաղականութեան գրասենեակը ներկայանալ ամեն օր կէսօրէ առաջ ժամը 9:00էն 12:00 եւ ներկայացնել:

- 1.- Դամբարանի կալուածագիրի լուսապատճենը:
- 2.- Դամբարանի կալուածագիրի անուանատիրոջ ընտանեկան իխրած բայտի լուսապատճենը:
- 3.- Դամբարանի կալուածագիրի անուանատիրոջ ժառանգութեան իրաւասութիւնը ունեցող անձին անունը, ժառանգական կապը հաստատող ընտանեկան իխրած բայտ, հասցեն եւ հեռաձայնի թիւերը:
- 4.- Կալուածագիրի անուանատիրոջ կամ անմիջական ժառանգորդի երկրէն դուրս բացակայութեան պարագային արտասահմանի հասցեն, հեռաձայնի թիւը, ե-նամակ եւ անուանատիրոջ հետ ժառանգական կապը հաստատող փաստաթուղթեր:
- 5.- Կարելի եղած չափով արձանագրել տունեալ դամբարանի մէջ թաղուած անձերուն անունները, ազգականական կապը եւ թաղման թուականները:

**ԾԱՆՕԹ.** Կը խնդրուի արտասահմանի թերթերէն՝ արտատպել:

ԴԻԻԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

«ԱՆԴՐԱՆԻԿ» ՄԵԼԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Հ.Բ.Ը.Մ. - Հ.Ե.Ը.

**ԱՐԱՄ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ**

100ԱՄԵԱԿ

Կը ներկայացնէ՝ **ԶԱԲԱՐ ԲԵՇԻՇԵԱՆ**

Կիրակի, 14 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, Հ.Բ.Ը.Մ. - Հ.Ե.Ը. «Զապէլ Մովսէսեան» կեդրոն, Հըրշ Թապէ:

ՀԱՍԱԶՊԱՅԻՆԻ «ԿՈՄԻՏԱՍ» ՄԱՍՆԱՃԻՂԻ ՊԵՅՐՈՒԹ

**ԿԱՂԱՆԴԻ ԽՐԱԽՃԱՆՔ**

Չորեքշաբթի, 24 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:30էն սկսեալ: Crown Plaza պանդոկի Queen of Colonies Grand Ballroom սրահին մէջ, Համրա:

**ԾԱՆՕԹ.** Տեղերը ապահովել հեռաձայնելով հետեւեալ թիւերուն՝ 01-377862, 03-61 7955 եւ 03-460322:

**ՆՈՐ ՏԱՐՈՒՆ ԾՐԱԳՊՏՈՅՆՆԵՐ**

- 1.- 29 Դեկտեմբեր - 5 Յունուար. Երեւան միայն 225 \$
- 2.- 30 Դեկտեմբեր - 2 Յունուար Կիպրոս կամ պտոյտներով 245 \$
- 3.- 23 - 27 Դեկտեմբեր եւ 29 Դեկտեմբեր - 2 Յունուար Գահիրէ 450 \$:
- 4.- Գահիրէ, Լուքսոր, Ատուան, 27 Դեկտեմբեր - 2 Յունուար 730 \$
- 5.- 30 Դեկտեմբեր - 5 Յունուար Թունիզ 585 \$ Հայաստան եթէ ու դարձ օդանաւի թունակ ARMAVIA միայն 111 \$

ԱՅՃԵԱՆ ԹՈՒՐՁ, 01 - 261177 / 03 - 233978  
01 - 240654 գիշերները 01 / 258887

**ԱՉԳԱՅԻՆ ԵՂԻՃԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈԼԷՃԸ**

Ձեզ կը հրաւիրէ այցելելու իր կազմակերպած **ԿԱՂԱՆԴԻ ՊԱԶԱՐԸ**

«ՍԻՐԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ» հանդիսարանին մէջ: Պիտի վաճառուին Կաղանդի յատուկ գործեր, ծածկոցներ եւ մոմեր, խմիչք, մրգեղեն, խաղալիք եւ բազմազան նուրբներ:

Բացում՝ 16 Դեկտեմբեր 2003, ժամը 11:00ին: Պազարը բաց պիտի մնայ մինչեւ Դեկտեմբեր 27, ամեն օր բացի Դեկտեմբեր 25էն ժամը 10:00էն 17:00:

السفير  
السفير  
السفير  
السفير  
السفير

**ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐՈՒԹԻՐԸ**

12 Գեկտեմբերի լիբանանեան օրաթերթերը լուսարձակի տակ առած են Լիբանանեան Համալսարանի դասախօսներու ցոյցը, որուն մասնակցած եւ իրենց դասախօսներուն վորակութիւնը յայտնած են մեծ թիւով ուսանողներ:

Միջապային եւ շրջանային լուրերու կարգին պաղեստինեան տագնապն ու Ռաֆահի մէջ տեղի ունեցած շարժը, Իրաքի մէջ վերաշինութեան աշխատանքներուն համար դրուած նախապայմանները եւ այլ վարձագումներ կը գրաւեն օրաթերթերուն զխաւոր բաժինը:

Լիբանանեան ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԱՍԱԽՈՒՄՆԵՐՈՒ ՅՈՅՅ

«Լիուս» գրած է, թէ ուսանողներու խուռներամ մասնակցութեամբ տեղի ունեցաւ Լիբանանեան Համալսարանի դասախօսներուն ցոյցը: «Կուսակցական ուժեր» առաջնորդեցին շարժումը եւ հաւակարան է, որ խորհրդարանը եւս միջամուխ ըլլայ այս հարցին:

Թերթին համաձայն, Խաթեմի Լահուտի ըսած է, թէ կը վորակցի պաղեստինցիներու բնակեցումը մերժող լիբանանեան կեցածքին:

Ըստ «Բիֆահ Արապի»-ի, ընդդիմադիրները եւ համակիրներ, աջակողմեաններ ու ձախակողմեաններ, շուրջ տասը հազար անձեր մասնակցեցան դասախօսներու իրաւունքները պահանջող ցոյցերուն:

«Մուսաբապալ» դիտել տուած է, թէ ՀԸԿ պալլա եւ այլ կուսակցութիւններ մասնակցեցան բողոքի ցոյցին, իսկ դասախօսները իրենց դասախօսը կը շարունակեն:

«Սաֆիր»-ի համաձայն, խուռներամ

բազմութեան մասնակցութեամբ ցոյց մը տեղի ունեցաւ մայրաքաղաքին մէջ, որ երկար ժամանակէ ի վեր նման դէպքի մը ակաւատես չէր եղած: Ուսանողները կը վորակցին իրենց դասախօսներուն եւ ապային համալսարանին:

Թերթը դիտել տուած է, թէ Խաթեմի կը սպառնայ Սուրիոյ եւ Լիբանանի նախագուշակեան հարուածներ հասցնել:

«Նահար» նշած է, թէ Լիբանանեան Համալսարանը մեծ յաղթանակ մը արձանագրեց իր բողոքի լայնածաւալ ցոյցով, սակայն հարցը տակաւին անլուծ կը մնայ, իսկ տագնապը կը շարունակուի:

«Անուար» հարց տուած է, թէ ի՞նչ է բողոքի ցոյցերուն յաջորդող հանգրուանը, նշելով, թէ դասախօսներն ու կառավարութիւնը կը գտնուին տագնապի մը սեմին: Ըստ թերթին, իշխանաւորներուն եւ նախարարաց խորհուրդի բացակայութիւնը պատասխանատուներու եւ կասկածներու դուռ կը բանայ:

«Մուսաբապալ»-ի համաձայն, Քորէյ կը յայտարարէ. «Ապահովութեան պատրաստութեամբ մըն է եւ կը մերժենք հաւերուն նման ձողերու ետին ապրիլ»:

**ԻՐԱԲԵԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ**

«Բիֆահ Արապի» նշած է, թէ Իրաքի վերաշինութեան մասնակցող երկիրներ ճնշում կը բանեցնեն իշխանութեան վրայ ընդդիմադիր ցեղախումբեր հետապնդելու:

Ըստ թերթին, իրաքեան նորակազմ բանակին կէսը հրաժարականը կու տայ, իսկ 4 պայտումներ կը ցնցեն բնագրաւոր ուժերու մէջ կեդրոնը:

«Լիուս» նշած է, թէ Ռամատիի մէջ ամերիկացի պինուոր մը սպաննուեցաւ եւ 14 ուրիշներ վիրաւորուեցան անձնասպանական գործողութեան մը հետեւանքով, մինչ Պաղեստինի մէջ պայտումները կը շարունակուին:

Թերթին համաձայն, Պուշ յայտարարած է, թէ շինարարութեան համաձայնագիրները պէտք է բարելաւեն Իրաքի մէջ պինտաւորութիւնը:

Շար.ը՝ էջ 10

**ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ՏԱԳՆԱՊ**

«Բիֆահ Արապի» գրած է, թէ Ռաֆահի մէջ գործադրուեցաւ իրաքիէն շարժ մը եւ վեց պաղեստինցիներ սպաննուեցան:

«Լիուս»-ի համաձայն, Ռաֆահի մէջ իսրայէլեան ռճիր մը խլեց 6 անձերու կեանքը:

«Անուար» նշած է,

**ՎԱՆԱՅ ԶԱՅՆ** **ՎԱՆԱՅ ԶԱՅՆ**

**«ՀԱՅ ԴԱՏԱ ԱՅՍՈՒՆ»**

Այսօր՝ Շաբաթ, 13 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 4:45ին, «Կանայ Չայ»-էն լսեցէք «Հայ Դատը այսօր» յայտագիրը:

- Մեր խօսքը
- Լուրեր Հայ Դատի աշխատանքներուն մասին
- Պատմական ակնարկ
- Հարցազրոյց մտաւորական եւ հրապարակագիր ԸՆԿ. ՅԱԿՈՒ ՊԱԼԵԱՆԻ հետ

**ՇԻՐԱԿ**

ՏՊԱՐԱՆ • ՀՐԱՏԱՐԱԿԶԱՏՈՒՆ

**Առևտրական Տպագրութիւն**

Այցեքարտեր - Նամակի Թուղթեր - Պահարաններ Թուղթեր - Հաշուեցոյցներ - Ստացագիրներ Որմազներ - Պիտակներ - Կիլքեր - Եւլ:

**Միութեանական եւ Դպրոցական Տպագրական Աշխատանքներ**

Յայտագիրներ - Հրատարակումներ - Օրացոյցներ Վիճակացոյցներ - Վկայականներ - Տարեգրքեր Պարբերաթերթեր - Եւլ:

**Հարսանեական Զարտերու Ճոխ Հաւաքածոյ**

Հարպոյեան Կեդրոն • Bloc C • Կապուա Լամուտ • Հեռ. 01 253008

Բեմանդիկ Ստացարան • Սրագ Սպասարկութիւն • Սերտուած Գիներ

Հ. Յ. Դ. ԶԱԿԱՐԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

**ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՇԱՆԴԵՍ**

Մասնակցութեամբ՝ «ԿՈՄԻՏԱՍ» ՆՈՒԱԳԱՆՈՒՄԻՆ ԵՒ ԵՐԳԻՉ ՅՈՎՍԵՓԻ

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 24 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 9:00էն սկսեալ, «ՏԵԼԼԵԼԻՆՍԱ» ճաշարանին մէջ, Մամուրէյն:

• Տոմսերը ստանալու համար դիմել՝ Համազգայինի գրախանութ, «Ճաղոյեան» կեդրոն:

Սակ՝ 30 \$

# 2007-ԴԱՐՈՒ ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՆԵՐԸ ԱՆՄԱՀԱՅԱԾ ԵՆ ԸՆՈՐՀԻՒ ԿԱՐՈՒՄԸ ՍԷԹԵԱՆԻ ԱՐՈՒԵՍՏԻՆ

## ՍՏԵՓԱՆ ԹԻԹԻԶԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Ք ա ո ա ս ու Ն օրեր առաջ Գեորգի Հայրենյանը հողին յանձնեց իր գաւառի գաւազաններէն բազմապատակ ուսուցիչ Ստեփան Թիթիզեանը:

Ան ծնած էր 7 Յունուար 1924ին, Գալստուրի գիւղին մէջ: Մննդավայրին Ազգային նախակրթարանը աւարտելէն ետք ընդունուեցաւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան Անիի խաւի զարեմական դպրոցը, զոր աւարտեց փայլուն յաջողութեամբ: Ամուսնացաւ Համագաւառացի Մարկ Կարպուշեանի հետ եւ ունեցաւ չորս զաւակ: Երեք մանչ եւ մէկ դուստր:

Ստեփան Թիթիզեան իրբեւ ասպարէզ ընտրեց ուսուցչութիւնը՝ իրեն համար առաքելութիւն ու նուիրում նկատելով հայ նորահաս սերունդներուն հայեցի կրթութիւնը շարունակելու աշխատանքը: Տարիներ շարունակ Գեորգի, Գամասկոսի եւ Հալպիսի հայկական վարժարաններուն մէջ պաշտօնավարելէ ետք, վերջնականապէս փոխադրուեցաւ Լիբանան, ուր դարձեալ շարունակեց իր երախտաբան առաքելութիւնը՝ մինչեւ հանգստեան կոչուիլը: Այսպէսով, ան քառասուն տարիներ շարունակ հայ սերունդներուն դաստիարակեց հայրենի եւ հայոց պատմութիւնը: Երկար տարիներու իր վաստակը՝ իրբեւ տիպար ուսուցիչ, զնահատուեցաւ Լիբանանի Ազգային առաջնորդարանին կողմէ, զոր պարգեւատրեց զինք զնահատանքի գիւրով:

Պարոն Ստեփան Թիթիզեան ամէն բանէ առաջ ազգանուէր հայորդի մըն էր, խոր հաւատք ունէր հայրենիքին եւ Հայաստանի ապագային նկատմամբ, կը հաւատար, որ արդարութիւնը ի վերջոյ օր մը պիտի յաղթանակէ եւ հայրենիքը պիտի տիրանայ իր անկատար սենյերուն: Այս համոզումով ան իր կնոջ՝ Մարիի հետ դաստիարակեց իր զաւակները, որոնցմէ Րաֆֆին, հետեւելով ծնողքին ստացած դաստիարակութեան, ինքզինքը նուիրեց Հայ Դատին եւ Հայաստանի ազատագրութեան պայքարին: Մինչեւ օրս ան կը մնայ բանտարկուած՝ Քանաթայի մէջ բանտին մէջ, սպասելով արդարութեան:

Սիրելի եւ յարգելի հայ մարդ, հայ ուսուցիչ՝ վարժք կատար բազմամեայ, բազմաբնուէր, անձնուէր ծառայութեանդ համար: Մեր մաղթանքն ու աղօթքն է առ Աստուած, որ լոյսերու մէջ հանգչեցնէ հողին: Կր խոնարհինք անթաւան յիշատակիդ առջեւ: Այս քանի մը տողերը թող կազմեն յարգանքի տուրք մը, ծաղկեփունջ մը շիրմիդ առջեւ: Ննջէ խաղաղութեամբ Գալստուրի մշտադալար կասլի ծառերու շուրջին: Հողը թեւ թեւ գայ վրագ:

ՀԱՅՐԵՆԱԿԻՑ ՄԸ

Համագայինի Լիբանանի Շրջանային վարչութիւնը յարգանքի նախաձեռնութիւն մը ունեցաւ՝ ոգեկոչելով վարուժան Սէթեանի յիշատակը: Կազմակերպեց ցուցահանդէս մը, ուր ցուցադրուած էին «20րդ դարու հայ մտաւորականներու դիմանկարները»: Չեւեարկը աւանդուած էր նոյն ատեն Համագայինի հիմնադրութեան 75ամեակին ու կը վայելէր բարձր հոգեւորականութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ վեհափառ Արամ Ա. կաթողիկոսին:

Կաթողիկոսութեան «Կիլիկիա» թանգարանին մէջ ցուցադրուած էին Հայաստանի թէ՛ Սփիւռքի 40 մտաւորականներու լուսանկարային դիմանկարներ: Առիժնայի վարչութիւնը յատկացուած էր հայրենի գրագէտներու, բանաստեղծներու, երաժիշտներու եւ արուեստագէտներու: 40 դիմանկարներու մէջ կը տեսնուէին երեք կին բանաստեղծ-գրագէտներ: Սիրվա Կապուտիկեան, Մարո Մարգարեան եւ Անահիտ Սահյան:

Ցուցահանդէսը բացուեցաւ 5 Դեկտեմբերի երեկոյան, տեւեց հինգ օր: Այցելողները վերապրեցան ու վերախոնարհան յիշողութեանը, որոնք

առ յաւելտ բաժնուած են մեզմէ: 20րդ դարու ապրած ու ստեղծագործած պատուական հայորդիներ, որոնք ներշնչեցին հայու զաւակները, ծաղկեցուցին հայ մշակոյթը ու բարի յիշատակ թողոյցին: Այս կը նշանակէ, որ արուեստագէտ լուսանկարիչը գրականութեան ու գեղարուեստի պատմութիւնը կ'առնէ իր մեզի, որովհետեւ երբ նա յիշեց այս դիմանկարներուն, պիտի զգանք, թէ անոնք կ'ապրին, կը շնչեն մեզի հետ: Վ. Սէթեան զանոնք կը ծանօթացնէ մեզի գեղեցկօրէն արտայայտուած նկարներով: Բոլորն ալ թարմ մնացած են կարծէք, նոյնիսկ ծերութեան տարիքի մէջ եղողները ժպտուն են, ունին զէտներու, նախագահներու, վարչապետներու եւ հանրածանօթ արուեստագէտներու: Սա ինքնին պատկերազարդ պատմութիւնն է մէկ դարու Լիբանանի, մեր այս երկրորդ հայրենիքին իրենց շունչն ու քրտինքը փոխանցած մեծերուն: Վաստակ մը պատկառելի, լուսանկարչութեան ճամբով: Մնացածը մը միշտ յիշարժան:

Կր դիտենք մէկ կիկ - մէկ կիկ մեզի ծանօթ, մեզմէ

րուժանի ուշադրութեան: Ու եթէ ճակատագիրը անողոք չըլլար իր նկատմամբ, վստահ ենք, որ պիտի շարունակէր իր սկսած գործը, որ առաքելութեան մը ուժը ունի:

Հայրենի մտաւորականներու մէջ կը տեսնենք անմահանուն Պարոյր Սեւակը, Շիրազը, Դաշտենցը, Տարոնցին, Մկրտիչ Արմէնը, Գէորգ Էմինը, Գ. Մահարին, Բ. Յովհաննիսեանը, Համօ Սահեանը, Ռազմիկ Դաւոյանը եւ չորրորդ գրեթէ անհամար մեր եկած ու ննջած բանաստեղծներուն, արուեստագէտներուն:

Հարկ է անցողակի յիշենք, որ Վ. Սէթեան իր յարգանքը մատուցեց նաեւ լիբանանցի քաղաքական գէտներու, արուեստագէտներու, նախագահներու, վարչապետներու եւ հանրածանօթ արուեստագէտներու: Սա ինքնին պատկերազարդ պատմութիւնն է մէկ դարու Լիբանանի, մեր այս երկրորդ հայրենիքին իրենց շունչն ու քրտինքը փոխանցած մեծերուն: Վաստակ մը պատկառելի, լուսանկարչութեան ճամբով: Մնացածը մը միշտ յիշարժան:

Կր դիտենք մէկ կիկ - մէկ կիկ մեզի ծանօթ, մեզմէ

րածնուած զէմքերը: Միւս անձանցինքն ալ ծանօթ կը թուին կարծէք, որովհետեւ վարուժանի լոյսի եւ ստուգիչի «խաղերը», անոնց փայլքն ու շողը, մուծն ու արբեր կը փոխանցեն լուստեսութիւն մը, պատգամ մը, զորս կրնանք ամփոփել նախադասութեամբ մը: «Մենք գործածեցինք, ստեղծեցինք ու անցանք, շարունակեցէք պահպանել հայ մշակոյթը, գեղարուեստն ու գրականութիւնը»:

Հոգիներու աշխարհին մէջ դրոշմուած խօսքեր՝ նկարուիլ: Վարուժանի ժպտով դիմաւորեց զինք եւ խնդրեց, որ նկարէ, բայց արտասովոր խառնուածքի տէր գրագէտը ուսը թօթուեց, արագ շարժումով մտաւ ինքնաշարժ ու մեկնեցաւ:

Երբ կը դիտէի Վարուժանին պատրաստած մեր մտաւորականներուն եւ արուեստագէտներուն լուսանկարները, յիշեցի մյուս անուշ-լեզի դրուագը եւ ըսի իւրովի՝ ինչ լաւ պիտի ըլլար, եթէ Մարոյեան լուսանկարէր նաեւ զինք, ու ներկայութիւն ըլլար տողանցող մեր մեծերուն հետ:

ՀԱՆՐԱՊԵՏ

### ՈՒՒՆԵՄ ՍԱՐՈՅԵԱՆ ԿԸ ԲԱՅԱԿԱՅԵՐ

1970ական թուականներուն սկիզբը, համաշխարհային ճանաչում գտած գրագէտ Ուիլիամ Մարոյեան այցելեց Լիբանան: Լիբանանի կեցութեան օրերուն այցելեց նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան՝ երջանկայիշատակ Սորէն Ա. վեհափառի գահակալութեան օրերուն: Վանք հրահրուած էին նաեւ լիբանանահայ արուեստագէտներ, մտաւորականներ եւ գրասէրներու բազմութիւն մը:

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈՒԷՃԻ 20ԱՄԵԱԿ

Համագայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճը կրթական ընթացիկ տարեշրջանին կը տօնէ իր հիմնադրութեան 20ամեակը:

Արդէն երկու տասնամեակ: Այսինքն՝ երաժշտական երկու սերունդ: «Կանաչեանական սերունդ»... Այսինքն՝ երաժշտական իւրայատուկ զէմք եւ դիմագիծ ունեցող սերունդ...

Կարենայ ըմբռնելու եւ ընդգրկելու համար այս չակերտեալ նորաբանութեան իսկական տարրողութիւնը անհրաժեշտ է վերահասանալ 70ական թուականներուն, մեր երաժշտանոցի չզոյլութեան օրերուն...

Պէտք է խոստովանել, որ երաժշտանոց յաճախող հայ աշակերտներ սակաւաթիւ չէին, սակայն դիմագիծ ունէին... Հ.Բ.Կ.Գ.Գ. 20ամեակը ատով կը յատկանշուի ամէն բանէ առաջ... Ազգային նուագաբան վարժարանին մէջ հաստատուած առաջին տարիները (1983-1986) կարելի է «Կանաչեան երաժշտանոցի» նախապատմութիւնը նկատել: այն հերոսական տարիները, երբ հիմնադրուեցին եւ առաջին տնօրէններուն դիմաց մեծ մարտահրաւերներ կանգնած էին թէ՛ կազմակերպչական եւ թէ՛ ուսումնական-ծրագրային եւ մանկավարժական առումով՝ իրբեւ իր տեսակին մէջ առաջինը սփիւռքահայ իրականութեան մէջ: 1987ին երաժշտանոցը կը հաստատուի իր մնայուն նստավայրը՝ Պուրճ Համուտի «Լեւոն Շանթ» Մշակութային կեդրոնին մէջ:

Փորձառական առաջին հնգամեակէն ետք, այս երկրորդ հնգամեակին է, որ առաւելաբար տնօրէն



նութիւնն ու վարիչ մարմինը կը յաջողին մեր երաժշտանոցին հաղորդել իր իւրայատուկ դիմագիծը՝ իրբեւ «ճառագայթող օճախ» գայն վերածելով ոչ շահաւէտ հաստատութեան մը, մեկնելով Համագայինի հանրաճանաչ առաքելութեան սկզբունքներէն, իր վրայ կեդրոնացնելով երաժշտանոցի հասարակութեան ամբողջ ուշադրութիւնը, որուն իրբեւ արդիւնք Լիբանանի քաղաքացիական պատերազմի վերջին հանգրուանի (1989-90) նախօրեակին ան կը հասնի իր գագաթնակէտին՝ իրբեւ քանակ (450 աշակերտ):

Պատերազմին յաջորդող առաջին տարիները վերականգնումի հանդերձ ան կը հանդիսանան, որուն առաջին եւ ամէնէն կարեւոր իրագործումը կարելի է նկատել Երեւանի Կոմիտասի անուան Պետական երաժշտանոցի եւ հայրենի մասնաճիւղներու հետ կնքած (1991) գործակցութեան համաձայնագրերը:

Այս նախաձեռնութիւնները մեր երաժշտանոցին կ'ապահովեն յաւելեալ որակ եւ մակարդակ: Վերջին հնգամեակը ոչ միայն կայունացման, այլեւ ինքնահաստատման հնգրուան մը կը հանդիսանայ: ոչ միայն իր հաստատուած առաջին շրջանաւարտներով, այլեւ՝ իրանանեան երաժշտական ըն

մին վրայ ինքզինք պարտադրելով շնորհիւ իր բազմաթիւ տաղանդաւոր դասնակիցներուն ու մրցանակաւորներուն: Լիբանանահայ այս իւրահայտուկ կոստյոյ 20ամեակի յառաջիկայ հանդիսութիւններու պաշտօնական ազգանշանը կը տրուի Դեկտեմբեր 2ին, «Royal Plaza» պանդոկին մէջ տեղի ունեցած նախաճաշի ձեռնարկով՝ կազմակերպութեամբ երաժշտանոցի ծնողական յանձնախումբին:

Տիկին Ալիս Մարկոսեան, բացման եւ բարի գալուստի խօսքէն ետք, բեմ կը հրահրէ երաժշտանոցի առաջին շրջանաւարտ թաւաք Գապագեան - Հաշտօբեան: Թ. Հաշտօբեան հակիրճ պատմականով մը կ'անդրադառնայ երաժշտանոցին ծնունդին եւ մեր գաղութի երաժշտական կենսաբան մէջ անոր ունեցած կենսատական դերակատարութեան: Ան մատնանշեց «Բ. Կանաչեան» երաժշտանոցին ձգտած անժխտելի դրոշմը, յատկապէս լիբանանահայ նոր սերունդի երաժշտական կազմաւորումին վրայ:

Տեղի ունեցաւ գեղարուեստական ճոխ յայտագրի մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին ջուլթակահար Տիգրան Սաչատուրեան, ծնողական յանձնախումբի անդամներէն Գարմէն Աճէմեան իր մենեքներով եւ

«Քնար» պարախումբի անդամ Անիթա Քէլէշեան իր մենապարով: 20ամեակի առիթով Երեւանի Կոմիտասի անուան երաժշտանոցի գործակցութեամբ նախատեսուած են շարք մը գեղարուեստական ձեռնարկներ, որոնց շարքին առաջինը կը հանդիսանայ ընթացիկ ամսուան մէջ կայանալիք Երեւանի երաժշտանոցի աշակերտ ջուլթակահար Յասմիկ Աֆտալեանի եւ ծակցութեամբ նախատեսուած են շարք մը գեղարուեստական ձեռնարկներ, Մարկոսեանի համերգը:

## ԲԵՐԻՈՅ ԹԵՄՈՒ ՄԷՂ

### ԱՐԺԱՆԻ ՇՈՒՔՈՎ ՆՇՈՒԵՑԱԻ ԵՐԱՆԱՇՆՈՐՀ Տ.Տ. ԶԱՐԵՀ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ 40ԱՄԵԱԿԸ

Ուրբաթ, 5 Դեկտեմբեր 2003ին, Բերիոյ թեմի բարեպաշտ ժողովուրդը արժանի յարգանք ընծայեց իր Գալստուրի առաջնորդներէն եւ Մեծի Տանն Կիլիկիոյ երանաշնորհ գահակալներէն Տ.Տ. Զարեհ Ա. Փայասլեան կաթողիկոսին:

Արգաթեւ, Կիլիկիոյ կաթողիկոսարանին մէջ Արամ Ա. վեհափառի հովանաւորութեամբ տեղի ունեցած 40ամեակի ոգեկոչական հանդիսութեանէն ետք, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան բոլոր թեմերը, ի շարք ուրոնց նաեւ Բերիոյ թեմը, ձեռնարկեցին յիշատակի ոգեկոչման հանդիսութեանց կազմակերպումին, վառ պահելու համար հոգեխոյս հայրապետին խնկելի յիշատակը:

Հովանաւորութեամբ ու նախագահութեամբ Բերիոյ թեմի առաջնորդ Սուրբ Գրգոր Գաբրիելի եւ ներկայութեամբ Հայ Կաթողիկոսութեան Արքեպիսկոպոս Եղեգիներու ներկայացուցիչներուն, պետական երեսփոխան Սիւմբուլ Սիւմբուլեանի, կրօնակազմի ղեկավար Գաբրիել իշխանութեան անդամներուն, ինչպէս նաեւ հաւատացեալներու հոծ բազմութեան, յիշատակի հանդիսութիւնը տեղի ունեցաւ Երեկոյան ժամը 9:00ին, Հալպիսի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցու մէջ:

Այս առիթով Աքեթիլիսաէն յատկապէս հրաւիրուած էին՝ Մայրավար տեղեկատուական բաժանմունքի տնօրէն Գրիգոր Մ. Վրդ. Չիֆթեանի եւ զպրկանքի ուսուցիչ եւ ազգային գործիչ ու հրապարակախօս Գեորգ Գալստախանեան:

Բացման խօսքով Վահէ Ժամագործեան Ս. Քառասնից Մանկանց եկեղեցու ղեկավար Գաբրիել իշխանութեան անդամները արգանքով իրար քայլը, որ ուղղած էր դեպի եկեղեցին, զպարտեցին մինչեւ հայ եկեղեցույ պետի բարձրագոյն պատիւին: Մէջընդմէջ կատարուող շարակցներու երգեցողութիւնը, Ս. Քառասնից Մանկանց զպարտեց կողմէ, հոգեւոր ապուրմանով լիացուց ու եկեղեցական արքողութեան մը մըմտրար ստեղծեց վեհափառի յիշատակը յարգով մեծարելով, բազմութեան մէջ: Գրիգոր ծայրագոյն վարդապետ վեր առաւ երանաշնորհ հայրապետի կենսագրական ընդմէջէն հետեւեալ կազմաւորուող ապագայ մեծ հոգեւորականին բարձր արժանիքները, որոնք կենցիկի ամենէն զմուտքին ու անկապտ պայմաններուն մէջ իսկ մնացին վեհ եւ զարձան առաքելութեան չափանիշ: Ի վերջոյ,

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ղարեբեկ ծառայական առաքելութիւնը անգամ մը եւս հուճաւորող ու անթիլիասական նոր սերունդը ծառայելու վճարակաւորութեան կոփող մեծ դեմք որպէս ներկայացուց Զարեհ վեհափառը, «որուն ոգիով թրծուեցաւ ամբողջ սերունդը մը Աքեթիլիսա մէջ», ըսաւ ան: Գեորգ Գալստախանեան երգեցական խաղաղութեամբ վեր առաւ վեհափառի վարչական կենցիկ տոկոս կամքը ու կորովը, որ անյաղթելի մնաց մինչեւ իր տխուր վախճանը: Քառասնից տիպար որպէս ներկայացուց զարեհ վեհափառը՝ ան քանի մը օրինակներով անսնանի ըրաւ արդարութեան ու ճշմարտութեան կողքին միշտ կանգնելու անոր քաջութիւնը: Ներքինը ու կրած շարքարանքը արհամարհելու քաջութիւնը, վասն արդարութեան ու ճշմարտութեան, նկատեց առաքելութիւնը, «որ քիչերու սեփականութիւնն է այսօր», ըսաւ ան:


Ցուցադրուեցաւ նաեւ Զարեհ վեհափառի գահակալութեան եօթը տարիներէն քաղուած տեսերիք մը՝ պատրաստուած մայրավարի տեղեկատուական բաժանմունքին կողմէ, ուր կը ներկայացուէր Զարեհ վեհափառին օճախը, Աքեթիլիսայի վերադարձը, Ս. Գրիգոր Ուսուցիչի մուտքը ի վերապի օտնը եւ Աքեթիլիսայի Ուսուցիչի օրը, ինչպէս նաեւ՝ կաթողիկոսարանին մէջ տեղի ունեցած պաշտօնակալ շարք մը հանդիսութիւններ: Այս առիթով նաեւ տպագրուած էր բանակազմը հայրապետին կենսագրականը, իր մասին վկայութիւններ ու իր կողմէ արտասանուած ներշնչիչ խօսքեր ամփոփող գրքոյկ մը:

Հուսկ, թեմի առաջնորդ Սուրբ Գրգոր Գաբրիելի օրհնութեան խօսքով եզրափակեց իւրայատուկ երեկոյն յիշելով զպրկանքին մէջ իր ուսանողութեան տարիներուն զուգահիշող Զարեհ վեհափառի ընտրութեան տպագրութիւնը: Այդ օրերուն նորըմտի վեհափառը շնորհաւորութեան համար վեհաբան բարձրացող ուսանողութեան ուղղած անոր խօսքը յաւերժական կտակ իրբեւ ներկայացուց սրբազանը, ուղղուած համայն ժողովուրդին, տէր կանգնելու մայրենի մեր եկեղեցիին, Մեծի Տանն Կիլիկիոյ դարաւոր Ս. Արքեպիսկոպոսի գաւազաններուն:

Մտքաւանդը «Պահպանիչ»ով վերջ գտաւ օրուան հանդիսութիւնը:

# Գրական Էջ

## «ԳԱՂՏՆԻ ՊԱՐՏԷՉ»



Վահան Թեքեանի բանաստեղծությունները ընտիր հասկաքաղ մը ամենայն բնութագրով բերելու գործը ինքնին հատուկ մը մեջ ամփոփած Վահան-Վահանի հատուկ տիրույթը շուրջ բարձր դարեր, հայ բանաստեղծության իշխանին ծննդեան 125ամեակին առիթով, վերջերս լույս տեսաւ նույն-բան շքեղ, գեղարտիպ եւ արժեքաւոր նոր հատուկ տիրույթը՝ «Գաղտնի պարտէզ» խորագիրով: Հայաստանի Գրողներու Միութեան, «Սփիւռք» Գիտա-ուսումնասիրական կեդրոնի եւ Թեքեան Մշակութային Միութեան Հայկազնի մասնաճիւղի միացեալ նախաձեռնութիւնը հանդիսացող լաթակազմ, մեծածաւալ եւ բարձրանշակ հատորը, որուն կողքին ունենցող բաժնիկներու տիտղոսաբարձրը նկարագրող է հայրենի հանրածանօթ գեղանկարիչ Հենրիկ Մալեան, կը բացուի նորա Ազատեանի վրձինի պատկանող Վահան Թեքեանի դիմանկարով, որուն յաջորդ էլին վրայ կը կարդանք Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեանի «Վահան Թեքեան. ուսուցիչի՝ ներկայութիւն» խորագրեալ կարն, բայց բնորոշ խօսքը, որ, անկրկնելի սիրերգակ, հայերգակ եւ վեհագոյն ապրումներու թարգման եզակի բանաստեղծը ըստ արժանւոյն մեծարելի է ետք, Վ. Թեքեանի ծննդեան 125ամեակի առիթով հրատարակուած «Գաղտնի պարտէզ» ժողովածուն կ'ողջունէ իրրեւ յուսուողիչ հատոր մը, որ «նոր մայրուղի է բացում բանաստեղծի իրական գնահատութեան առումով, ինչին, անկեղծ լինելը, վաղուց ենթարկէ սպասում»:

Վաղուց արդէն սպասուած բանաստեղծի յամեցող ժամանակին մասին խորհրդածելով առաջին ուսումնասիրութիւնը ստորագրած հայրենի ծանօթ գրականագետ Սուրէն Դանիէլեան կը բացակայէ բազմախորհուրդ աշխարհէն ներս այն տաղանդաշատ բանաստեղծին, որուն «երգը հայ բանաստեղծութեան գաղտնի պարտէզն է»:

«Գաղտնի պարտէզ»... «Ես սիրեցի» անկրկնելի բանաստեղծութեան վերջում տարօրէն բարացուցական ու խորախորհուրդ անուն մը, որ լաւագոյն կը դասուրէ ամբողջականօրէն «չհասկըցած», առեղծուածային եւ խօսքին մուր ու լույս խոհականութեամբ ոսկիացած Վահան Թեքեանի քերթողութեան ճշմարիտ էութիւնը: Մարդկային բարդ հոգին վաւերական բանաստեղծի խորաթափանց յայտնագործութեան վերջում տեսանալով մեծանուն բանաստեղծին արուեստին մեծութիւնը եւ բնորոշ յատկանիշները վերլուծելու համար, Սուրէն Դանիէլեան կ'առաջնորդուի ամբողջական սիրով «տարողունակ ընդգրկում»ի մեկնակետէն, որպէսզի հանգրուան առ հանգրուան կատարուած ընդգծումներով՝ վեր կարկառէ համապատկերը գուսպ, անպանոյն, նրբանշակ, բայց միաժամանակ բազմախորհուրդ ու թանձրացեալ այն «ստեղծագործական սխրանք»ին, որ արեւմտահայ բանաստեղծութեան ամենաբարձր հարստացուց ինքնագործմ յաւելումներով եւ եղաւ ճշմարիտ ուսուցիչ մը սփիւռքահայ բանաստեղծութեան արժանաւոր ներկայացուցիչներէն շատերուն համար:

Մարդու, Աստուծոյ, հայրենիքի, բնութեան մեծ սիրերգակին պատկերի ամբողջացման իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ սփիւռքահայ գրականագետ երուանդ Ազատեան: Թեքեանի քերթողութեան անձնական, մարդկային ու ազգային աշխարհները եւ արուեստի խառնաձայն չափանիշներով վաւերականացած ազնուական նկարագիրն ու տարողութիւնը, այսպէսով, իրարու արձագանգող գոյգ ընթերցումներուն լույսերուն շնորհիւ անկրկնելի ու տեսանելի կը դառնան:

«Գաղտնի պարտէզ»ը կը բանայ իր դոները եւ կը մագնիսէ բարձրանշակ ընթերցողը ըմբռնելով նաեւ այս հարուստ մրգատուանին անմահական միջոցները: Կը սկսի եօթը հանգրուաններու բացուող, աւելի ճիշդ՝ եօթը հեքիաթային աշխարհներու խորհուրդներուն հետ հաղորդուելու քաղցր ճամբորդութիւն մը: Գաղտնի՝ ճամբորդութիւն մը նաեւ, որուն նախաձեռնած իւրաքանչիւր ընթերցող տուն կը վերադառնայ իր մասնակցութեամբ ձեռք բերուած աստուծապարգեւ ընծաներով, որոնք, անտարակոյս, միշտ պիտի մնան գաղտնի իրրեւ ընթերցում առ ընթերցում ամբողջանալու վերանորոգ հրաւեր:

«Գաղտնի պարտէզ», կամ այլ խօսքով՝ սրտագրաւ եւ անմահանելի հրաւեր մը՝ դէպի տիեզերական այն կախարակական աշխարհ, որուն բացառիկ իշխաններէն մէկը եղաւ ու պիտի շարունակէ մնալ Վահան Թեքեան անուն անմահանուն մեծ սիրերգակը:

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ ՄԱՍԻՆ

Բանաստեղծութիւնը նախ զգացում մը, յետոյ գրական կտոր մը եւ գրական սեռ մըն է: Կեանքը նախ այն ուժն է, որ էակը կ'ապրեցնէ, յետոյ այն ժամանակաշրջանը, որ էակին ծնունդէն մինչեւ անոր մահը կը տեւէ: Եւ ինչպէս բանաստեղծութիւններ կան առանց բանաստեղծութեան, այնպէս ալ կեանքեր կան՝ գրեթէ առանց կեանքի...

Բանաստեղծութիւն-զգացումը կեանք ուժին մասն է, անոր ամէնէն հեռահաս, թափանցող եւ միեւնոյն ատեն իւրացնող, տիեզերական կեանքը թափանցող եւ իւրացնող մասը:

\*\*\*

Արուեստը այն գործիքն է, առանց որու բանաստեղծութիւնը չի կրնար շինուիլ: Միանգամայն այն նախանիւթն է արուեստը, առանց որու չի կրնար մարմնանալ բանաստեղծութիւնը: Երեւակայեցէք ազամանը, որ ազամանըով միայն կը յղկուի, ազամանը, որուն մէջ երկրի մուկը ընդերքները իրենց ամենալինջ մաքրութիւնն են դրած՝ բանաստեղծութիւնը...: Արուեստ-գործիքը արուեստ-նախանիւթն է կազմուած է, եւ նախանիւթ արուեստը պէտք է գոյութիւն ունենայ մարդուն մէջ, հին գոյութիւն ունեցող բանաստեղծութեան շուրջ, որպէսզի մարդը արուեստագէտ ըլլայ: Զուտ բանաստեղծութիւնը արտայայտելի չէ:

Խօսքը, հոս, կը վերաբերի բոլոր գեղարուեստները ոգիացնող բանաստեղծութեան, կը վերաբերի բոլոր գեղարուեստները մարմնացնող արուեստին անշուշտ:

\*\*\*

Իսկ գեղեցկութիւնը: Ի՞նչ է իր էությունը: Տա՛ր է ան, թէ ստորագիւր: Բանաստեղծութեան, թէ արուեստի տարր կամ ստորագիւր: Ե՛րբ կը ծնի, ի՞նչպէս կը ճանչցուի: - Խոսքիչ հարցումներ, ամէնքը, որոնց պատասխանել կը փորձէ հետեւեալ նախնական օրինակը:

Մայր մը օրօրելով կը քնացնէ իր երեխան: Իր սէրը զայն կը տեսնէ մեծցած: Մեծցած եւ առողջ կը տեսնէ զայն, ինչ որ կեանքի փոխանցման, անոր տեւականացման բնագոյն է իր մէջ եւ հասարակաց է ամէն օր: Բայց մայր կայ, որ իր զաւակը ապագային մէջ կը տեսնէ բարութեամբ, քաղութեամբ եւ տաղանդներով օժտուած, ամէնքէն սիրուած ու յարգուած, եւ մայր մըն ալ, որ զայն կը տեսնէ միայն հարուստ, հարուստ վաճառական մը, սեղանաւոր մը կամ կալուածատէր մը դարձած, ճոխութեան մը ապրելու եւ ապրեցնելու համար զինք՝ իր մայրը: Արդ, բանաստեղծութիւն - զգացում է առաջին մօր սէրը, որովհետեւ չի շարունակուի, չի պսպար գեղեցկութեամբ: Առաջին մօր սնուցած բա-

նաստեղծութիւն-զգացումն է, որ գեղեցկութիւն կը դնէ իր գաւազին երգած օրօրին մէջ, գեղեցկութիւն՝ որ կ'անցնի իր արուեստ-նախանիւթին մէջ, մինչ արուեստ-գործիքը որեւէ միջամտութիւն չ'ընէր հոն: Ի փոխարէն, արուեստ-գործիքը պիտի չ'յաջողէր որեւէ գեղեցկութիւն տալ երկրորդ մօր օրօրին:

Նորութիւն չէ, նոյնիսկ մաշած հնութիւն մըն է ըսել, թէ արուեստագէտները մայր են եւ իրենց գեղարուեստական գործերն՝ իրենց զաւակները: Դիպեցող եւ օրօրող մայրեր, վերի մայրերն է մէկին կամ միւսին նման: Ոմանք բանաստեղծութիւն - զգացումով, ուրիշներ շահ-զգացումով տարուող մայրեր: Ոմանք, հետեւաբար, գեղեցկութիւն եւ ուրիշներ տգեղութիւն արտադրող - խօսքը չ'ընելով «չոր ստնտուններուն», որոնք նոյնպէս երգ կը ստեղծեն, կամ ստեղծել կը կարծեն...

\*\*\*

Ամէն աղուոր բանի խոր սէր է, բանաստեղծութիւն - սէր: Բնութիւնը աղուոր է. բնութիւնը սիրով՝ բանաստեղծութեամբ եւ արուեստով ստեղծուած է. բնութիւնը ստեղծող սէրը աստուածային սէր մըն է. ուրեմն՝ Աստուած կայ, բանաստեղծ - արուեստագէտ Աստուած մը...

ՎԱՀԱՆ ԹԵՔԵԱՆ

## ՓՈՒՆԶ ՄԸ ԵՐԳԵՐ՝ «ԳԱՂՏՆԻ ՊԱՐՏԷՉ»ԷՆ

### ՔՈՒ ՅԻՇԱՍԱԿԻ ԱՅՍ ԳԻՇԵՐ...

Քու յիշատակը, այս գիշեր, զիս լալու չափ կը լույսէ. Կարծես մեկնած էր սրբաբն, եւ գաղտնաբար այս գիշեր ետ կը դառնայ, իր հին տեղն ու հին գգուանքը կ'ուզէ, Կը սեղմուի գրկիս մէջ, կը բարձրանայ կուրծքս ի վեր...:

Քու պատկերը՝ աչքիս մէջ եւ քու ձայնը՝ ականջիս, Կը թրթռնան այս գիշեր, երակներուս մէջ կարծես Քաղցրահոտ շունչդ է լեցուած, որ կը պղխէ, կ'օրրէ զիս: Մինչ երեսնայ ալ կ'անցնին կարծես մատներդ անտես...:

Ետ կը դառնան մի առ մի մեր հին ժամերն անկորուստ, Կարաւանին հետ աստեղծ անոնք կու գա՛ն վերըստին. Հոգիս փարա՛խն է բացուող ընդդէմ իր քա՛ղցրը հօտին...:

Յիշատակովդ, այս գիշեր, կը զգամ այնչա՛փ զիս հարուստ, Այնչա՛փ բարի, երջանիկ... որ գրթութեամբ մը անհուն՝ կը մրտածեմ զայն բաժնել երկրի բոլոր խեղճերուն...:

### ՀԱՆԵՄԸ

Միակըտուր սեւ-անփայլ մետաքսն ամբողջ զինք ծածկած Եւ քայլերուն մետաքսէ խոր շրջինն՝ վր թեթէ՛ Ըր ապրերուն քննարին կարծես նուա՛գն ըլլար ցած, Կ'երթա՛յ Հանրմն՝ յուզելով մուշկի ալիք մ'իր ետեւ...:

Ժանեկայորդ թեւէն դուրս կը բխի ձեռքը պսակի՛ Զոր նախանձուտ սեւ ձեռնոց մը կը պահէ կիսովին, Մինչ ուղղանկիւն ճակատէն ինկած քօղն ալ յուսանցիկ, Ծանրածարիր աչքերուն կ'անթեղէ հուրքը խորին...:

Կամուրջին վրայ, յորդապետ վերջալոյսի մը ներքեւ, Կ'երթայ Հանր՝ մը այսպէս, հորիզոնէ հորիզոն, Մըթնցնելով Ոսկե՛ղջիւրն ու դիւթելով Երեկուն...:

Կ'երթա՛յ Հանրմն՝ անմատոյց, քօղածածուկ, հոյածեւ, Կի՛ն կամ ոգի, պատ մ'ելած պալատներէն Պոլիսի, Պոլսոյ Ոգի՛ն՝ խուսափուկ, անքննելի՛, սխրայի՛...: 1906

### ՊԻՏԻ ԸՍԵՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ

Թէ պատահի որ այսօր անհասարար այս կրուիս Զրկարենանք դիմանալ եւ ուժասպար, ոգեվար Գետին ինկած չըկրնա՛նք որտքի ելլել վերըստին, Ու յաղթէ՛ մտաբ կեանքի ոգորունին մեր երկար...:

Թէ լըրանա՛յ այս ոճիրն ու վերջին Հայր փակէ Վերիժմալտ իր աչքերն՝ օրն յաղթութեան չողջունած... Ա՛հ, թո՛ղ այժմէն երդուրնայ իւրաքանչիւր մենէ՛ Որ հանդերձեալ կեանքին մէջ երբ որ գտնենք մենք Վաստուած

Ու երբ որ Ան՝ երկարային մեր մեծ ցաւին փոխարէն, Ուզէ ըզմեզ ըստփոփել, վարձահատո՛յց մեզ ըլլալ...: Իր այդ շընորհն ապաժամ մենք մերժելով ուժգնօրէն՝

Պիտի ըսենք.- «Մեզ դըժոխք, դըժո՛խք դրկէ անգամ մ'ալ. Չէ՛՛ որ զայն լաւ կը ճանչնանք, զայն ճանչցուցիր մե՛զ շատ լաւ, Եւ թուրքերուն յատկացո՛ւր արքայութիւնըդ անբաւ...»: 1917

### ՀԱՇՈՒԹՅԱՐԿԱՐ

Հաշուեյարդար. ի՞նչ մընաց, կեանքէն ինծի ի՞նչ մընաց. Ինչ որ տուի ուրիշին, տարօրինա՛կ, ա՛յն միայն. Խանդաղատանք մը ծածուկ, օրհնութիւններ անիմաց, Երբեմն հատնումը սրտիս ու մերթ արցունք մը անձայն...:

Ինչ որ զընաց ուրիշին՝ վերադարձաւ անուշցած Ու զօրացած՝ հոգիիս մէջ մընալու յաւիտեան. Ինչ որ տարաւ Սէրն ինձմէ՛ չըկորսուցուց զայն Աստուած Տըլաւ ինձ ետ ու ըրաւ կեանքս անով մի՛շտ բուրեան...:

Եւ այժմ, ո՛վ Տէր, հակառակ իմ տանջանքիս, հակառակ ինծի համար սա՛ չորցած երջանկութեան աղբիւրին, Հին գինիով յորդաբուխ եւ կ'արբենա՛մ տակաւին...:

Ու չեմ ըսեր՝ «Ի՞նչ մընաց...»: Ի՞նչ կը մընայ հողին տակ Եղէգնեքն զիրաթքը, կաղնիներէն հաստարուն. Արե՛ն ըմպած ըլլալու մը ինքնաբարանքը անհուն...: 1926

### ՄԵԿ ՀԱՏԻԿՍ

Իմ մէկ հատիկ՝ կըս հիմա, որ կը դիտես զիս վրիստ, Հայելիին ջրհորէն, Քեզի նըման ու քեզմով կը նայիմ եւ ալ վըրադ Երկարօրէն, ծանրօրէն...:

Ե՛ս արդեօք քեզ, թէ դուն զիս կը մեղքընանք աւելի՛ Երբ զիւրար լուռ կը դիտենք... Քովըդ եղբայրդ է մեռած, քու հին ընկե՛րըդ լոյսի՛ Զոր դեռ այսօր կ'ողբանք մենք:

Նոր պարնուած էր երբ որ գիշեր մ'երապըս տեսայ՝ Թէ մութին մէջ, հեւ ի հեւ, Կը քաշէի կարասի փոխադրող կառք մը հսկայ՝ Քովըս շուքի մը հետ սեւ,

Որուն յաճախ կ'ըսէի անկուրթիւնով ու վախով. «Ընկե՛ր, լաւ չեմ տեսներ ես, Դուն կը տեսնե՛ս...», ու թէեւ կը քայլէիք քովէ քով՝ Բայց ձայն չըկա՛ր ընկերէս:

Չէի գիտեր թէ արդէն մեռած էր խեղճ այդ պահուն. Այնուհետեւ չարթնցա՛ւ, Չըխօսեցաւ ան երբեք. վերջին տեսար զինքը դուն, Ան չըտեսա՛ւ քեզ բընաւ...:

Հայելիին ջրհորէն մինչ կը նայիս դուն ինծի, Ու կը նայիմ եւ իր մէջ, Կը նշմարեմ՝ ջըրամոյն ուրպէս զըլուիս մը Սուրբի, Անոր ծրփա՛լը անվերջ...:

Իմ մէկ հատիկ՝ կա... օ՛հ, ինչպէ՛ս սիրտըս վըրադ կը դողայ՝ Երբ կը տեսնեմ քեզմով քեզ. Քու արցունքը՛ վըր քեզի կը պաղատիմ եւ հիմա՛ Որ դուն ալ զիս չըլըքես...: 1925

### ԵՐԲ ՕՐԸ ԳԱՅ ՎԵՐՉԱՊԵՍ

Երբ Օրը գայ վերջապէս, եւ ըլլայ մարդը մարդուն Վայելքի մէջ, ի հարկին զրկանքի ալ հաւասար, Ուղղէ միայն բընութեան գոհուրթին կամ դառնութիւն, Նըմանին ո՛չ, յագուրդին կամ նօթութեանն իր համար...:

Երբ ա՛լ շղթան փոխանցման ըլլայ ու ո՛չ կաշկանդման, Ուժին հետ խելքն ու խելքին հետ վազէ սէրը նաեւ՝ Բոլոր ազգերն իրարու զօրող կապին այդ վըրան Ու կազմէ մէ՛կ ընտանիք մէ՛կ աշխարհին այս վերեւ...:

Երբ հիմա մօտ, մօտեցա՛ծ այդ Արշալոյսը ծագի՛ Գիտեմ եւ Յեղ մը ցրուած ամբողջ երեսը երկրի, Որուն բոլոր դամբաններն ու օրրանները բոլոր

Պիտի յանկարծ արթնանան, պիտի գոչեն հրճուանքով, Երդէ երդիք, փոսէ փոս, հայրը որդուին, որդին հօր, Թէ ա՛լ կրնայ՝ մին աճի ու միւսն հանգչիլ ապահով...: 1936

ՎԱՀԱՆ ԹԵՔԵԱՆ

# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՄԱԿԱՐԳԻԶ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ

## ԵՆԱՍԱԿԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

### «ԵՈՒՏՈՐԱ» «ԱՈՒԹԼՈՒՔ»Ի ՄՐՅԱԿԻՑԸ

Տարիներ է Վեր բազմաթիվ համացանց օգտագործողներ նախընտրած են Ե-նամակի փոխանակման «Եուտորա» ծրագրերը, Մայքրոսոֆթի «Աուտլուք էքսփրես» ծրագրերին փոխարին, որ մեծ թիվով օգտագործողներ ունի պարզ և լավ պատճառով, որ տեղադրուած է «Ուինդոզ» դրոսթեամբ բանող բոլոր համակարգիչներուն մէջ:

«Եուտորա»ի նորագոյն տարբերակը խթան պիտի հանդիսանայ, որ ծրագրի հաւատարմոր հետեւորդները մնան հաւատարիմ, իսկ զայն չգործածողները պիտի դիւրեւ մղելով, որ անոնք եւս փորձեն զայն:

«Եուտորա» ծրագրի պատճառով տարբեր պատկեր կրնայ ունենալ: Մէջը՝ «Եուտորա»ի դասական կառուցով, իսկ երկրորդը՝ «էքս-Փի» դրոսթեամբ յիշեցնող ալթերնատիվ:

Բնականաբար կարելի է «Եուտորա» ծրագրի մէջէն աւելի Ե-նամակի հասցէները ստուգել խիստ դիւրամատչելի կերպով, եւ այդ օգտագործելով «Եուտորա»ի պատճառով փարը գտնուող կոճակը:

Թէեւ «Աուտլուք 2003» իր կառուցով եւ կարելիութիւններով յաճախ ետ չի մնար «Եուտորա»էն, սակայն կարգ մտ տեղեր «Եուտորա»ի գիտակցութիւնը ակընյայտ է: Այսպէս, օրինակ, «Եուտորա»ի մէջ շատ աւելի կոկիկ կերպով կը մատուցուին բազմաթիւ ֆորումներ եւ քրէյմըներ պարունակող Ե-նամակներ, դուրս ձգելով անհարկի հասցէներու շարքեր եւ գրութիւններ շնորհիւ քոնթէնթ քոնտրոլըրները դրոսթեան:

«Եուտորա 6», իր աւանդական դարձած կարելիութիւններուն կողքին, առիթը կ'ընծայէ նաեւ սփէմ Ե-նամակներու բացառաւորութիւն եւ մեկուսացումին: Արդարեւ «Սփէմ Ուոչ» դիւրեւթեամբ կը նկատէ «անկոչ հիւրեր» հանդիսացող նամակները, որոնք այս կամ այն արտագրութիւնը կը ծանուցեն, եւ «Դառանձնացնէ» գանձը:

«Եուտորա 6»ի ձեռնարկը վճարովի (49 տոյար) տարբերակները կարելի է գտնել [www.eudora.com](http://www.eudora.com) հասցէով կայքին մէջ:


## «ՍԱՅԹԷՔ ՍԱՅՊՈՐԿ ԻՎՕ»

Համակարգչային խաղերու յափուկ այս քոնթրոլըրը (ձոյսքիք) հարուստ է կարելիութիւններով: Զայն կրնան օգտագործել ձախլիկներ եւ աշխիկներ:

Համակարգչային յափուկ ծրագրի մը շնորհիւ, կարելի է իւրաքանչիւր խաղի համար յափուկ ծրագրումով օժտել զայն, ինչ որ այս մարզին մէջ կը նկատուի կարեւոր նորութիւն մը:

Քոնթրոլըրներու աշխարհին մէջ ամէնէն աշքառուն հանդիսացող «Սայթէք Սայդորկ»ի մասին յաւելեալ տեղեկութիւններ եւ մանրամասնութիւններ կարելի է գտնել

[www.saitekusa.com](http://www.saitekusa.com) հասցէով կայքին մէջ: Սարքը կ'արժէ 40 տոյար:



## «ԼՈԿԻԹԷՔ» ԱՆԹԵԼ ՍՏԵՂՆԱՇԱՐԸ




Քիպորտներու աշխարհին մէջ «Լոկիթէք Տեքթոփ Էմ. Էք.» սարքը իր «արքայական» տեղը ունի: Առանց թելերու («Պլուրիթ» դրոսթեամբ) բանող այս սարքը աւանդական կոճակներով սահմանափակուած չէ եւ օժտուած է երկտասնեակ մը յաւելեալ կոճակներով: 180 տոյար արժող այս սարքին մասին յաւելեալ տեղեկութիւններ ներկայացուած են [www.logitech.com/bluetooth](http://www.logitech.com/bluetooth) հասցէով կայքին մէջ:

### «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒԱՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- 8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- 8:45.- «Աստղեր»
- 9:40.- «Օրուան տոմար»
- 10:05.- «Հոգեւոր խնդիր» Մաշտոց վրդ. Զօպանեան ուղղակի ձայնասփռումով կը ներկայացնէ շաբթուան մտածումը եւ կը պատասխանէ ունկնդիրներուն հարցումներուն
- 11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
- 1:30.- Դայաստանեան լուրեր
- 3:00.- «Ծաղկատան» մանկապատանեկան յայտագիր՝ ուղղակի ձայնասփռում
- 4:45.- «Կայ Դատը» այսօր»
- 6:50.- «Օրուան տոմար» (կրկնութիւն)

## ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԺՊԻՏ



«Կը հասկնամ թէ Սի.Փի.Եուն տեւաբար կը տաքնայ, սակայն չե՞ս կարծեր ասկէ աւելի լաւ լուծում մը ըլլալու է»:



## ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ


### ՄԻՏԻՎ ՍԵՆԹԵՐ ՍՈՆԻ ՓԻ. ՍԻ.

Հակառակ այն իրողութեան, որ Մայքրոսոֆթ Ուինդոզ էքս-Փի-Փի. «Միտիա Սենթեր» դրոսթեամբ լայն տարածում գտած է տարբեր ընկերութիւններուն հրապարակած համակարգչային դրոսթեամբներուն մէջ, «Սոնի» կը մերժէ հետեւիլ ընդունուած կարգին եւ պատրաստած է իր ուրոյն դրոսթեամբ:

«Սոնի Վայօ Ար-էս» համակարգիչներու շարքը կ'օգտագործէ այս ուրոյն դրոսթեամբ, որուն միջոցով կարելի է պատկերասփիւռի յայտագիրներուն հետեւիլ եւ զանոնք արձանագրել, վիտեոներ անայլ դրոսթեանէն թուագրային դրոսթեան փոխել, Վի. Սի. Տի. եւ Տի. Վի. Տի.ներ արձանագրել, եւ այլն:

850 տոյար արժող այս արտագրութեան մասին յաւելեալ տեղեկութիւններ տրամադրելի է [www.sony.com/vaio](http://www.sony.com/vaio) հասցէով կայքին մէջ:

### ԱՆԹԵԼ ՍԱՐՔԵՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՆ ՀԱՄԱՐ



«Աւանդական» գրասենեակ մը, որքան ալ կոկուած եւ յարգարուած ըլլայ, ունի ելեկտրական թելերու անձեւաբազտելի բաժին մը: Համակարգիչի, հեռաձայնի, սփէնդրի եւ ելեկտրոնային այլ սարքերու միացած թելերը գրասենեակը կը դարձնեն սարգոստայն մը:

Թելերէն ձեռքազատիլը սուղ կ'արժէ... բառին բուն իմաստով: Թէեւ բոլոր սարքերուն ալ անթել տարբերակներ կարելի է գտնել շուկային մէջ, սակայն բոլորովին անթել գրասենեակ մը ունենալը, առանց քանի մը հազար տոյար յաւելեալ գումար ծախսելու, աներեւակայելի է:

Այսպէս, օրինակ, «Թելազուրկ» հեռաձայն մը ունենալ փափաքողը կրնայ փորձել 450 տոյար արժող «Փալմ Ուան Թրէօ Սմարթֆոնը» ([www.palm.com](http://www.palm.com)), որ միաժամանակ կը ծառայէ իրրեւ ըլիջային հեռաձայն եւ գրպանի համակարգիչ: Գրասենեակին վրայ բազմած կոպիտ համակարգիչի փոխարէն, Լէֆթօփի մը ունենալ փափաքողը, եթէ պիտի գնէ նորագոյնը եւ լաւագոյնը, պէտք է 2000 տոյարէն աւելի վճարելու պատրաստ ըլլայ: Օրինակ, կ'ընտրէք «Էլ. Նոթպուկ» ([www.dateway.com](http://www.dateway.com)) կ'արժէ 2500 տոյար:

Բոլոր անոնք, որոնք փառքը փոյնի փորթէքթըրով մը կ'ուզեն օժտել իրենց գրասենեակը, կրնայ 2000 տոյարի գնել, «Վիուսոնիք Փի. ձէլ. 250 փրոճէքթըր»ը ([www.viewsonic.com](http://www.viewsonic.com)), որ հազիւ թէ մէկ քիլոկրամ կը կշռէ:



Իսկ եթէ ժամանցի համար է՞մ. Փի. 3 փլէյլը մը բարար չէք գտնել, կրնաք 450 տոյարի գնել Ար. Սի. էյ. Օտիօ Վիտէօ ճիւլաքը ([www.rca.com](http://www.rca.com)), որ 20 կիլոպայթ մամբարման կարելիութիւն ունեցող սարք մըն է: Անոր միջոցով կարելի է երաժշտութիւն ունկնդրել եւ ֆլյուիդ գիտել:

Դարակին մէջ գերփոքր թուագրային քամբրա մը ունենալ փափաքողը կրնայ միայն 150 տոյար վճարելով ձեռք ձգել 1,3 մէկափիքսէլ յատակութեամբ «Լոկիթէք փոքրէթ տիճիթը» 130» թուագրային լուսանկարչական սարքը ([www.logitech.com](http://www.logitech.com)):

## ՀԻՆԳ ՍԽԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ՝ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԱՊԱՅՈՎՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Փի. Սի. Մակագիւն»ի կատարած հարցախոյզին համաձայն, ստորեւ տրուած համակարգչային անվտանգութեան վերաբերող հինգ սխալ կարծիքները առաւելարար առկայ են հանրութեան մօտ:

Ա.- Կարելի է տեղեկութիւններ չեմ պահել համակարգիչիս մէջ, հետեւաբար կարիքը չկայ մտահոգուելու անոր ապահովութեամբ:

Այս դիրքորոշումը անցնելին ճիշդ էր, սակայն օրեր փոխուած են: Այսօրուան մահերը առանց խտրականութիւն դնելու կը տարածուին բոլոր անպաշտպան համակարգիչներուն մէջ եւ չեն հարցներ, թէ ո՞ր համակարգիչը կարեւոր տեղեկութիւններ կը պարունակէ: Ասիակ կը նշանակէ, թէ ձեր համակարգիչը կրնայ վնասներու ենթարկուիլ եւ ծախսերու դուռ բանալ: Աւելին. ան կրնայ նաեւ ծառայել իրրեւ միջոց, այլ համակարգիչներու վրայ կատարուած յարձակումներու համար, եւ հետեւաբար ենթակային նաեւ քաղաքացիական պարտականութիւնն է պաշտպանել իր հակարգերը:

Բ.- Եթէ համացանցը գործածելի ետք փակեմ համացանցին կապը ապահով եմ:

Սխալ: Համացանցը օգտագործելու ընթացքին ձեր համակարգիչին մէջ արձանագրուած ժահր մը կրնայ «գործի անցնիլ», երբ արդէն համացանցի հետ կապը խզուած է:

Գ.- Եթէ կասկածելի Ե-նամակներ չբանամ, համակարգչային ծախսերէ ապահով եմ:

Սխալ անձանօթ Ե-նամակի հասցէներէ չէ, որ ժահրեր կ'արձանագրուին համակարգիչին մէջ: Եթէ բարեկամի մը համակարգիչները ժահրով վարակուած է, կրնանք ժահր պարունակող Ե-նամակ մը ստանալ իր մէջ՝ առանց իր տեղեկ ըլլալու:

Դ.- Ես «Մաքիմոն» դրոսթեամբ կը գործածեմ եւ ոչ «Ուինդոզ», հետեւաբար պէտք չունիմ մտահոգուելու ծախսերու մասին:

Ճիշդ է, թէ ժահրերու մեծ մասը պատրաստուած է «Ուինդոզ» դրոսթեամբ բանող համակարգիչներու համար, սակայն «Մաք» եւ «Լինուքս» դրոսթեամբ բանող համակարգիչներ նոյնպէս ժահրերու յարձակումի ենթարկուած են:

Ե.- Համակարգիչս հակաժահրային ծրագրերով ունի, պէտք չունիմ մտահոգուելու:

Սխալ: Եթէ տեւաբար այդ ծրագրեր չայժմէականացւէք update) եւ ծրագրերը մեքենարար չի քննել ձեր ստացած Ե-նամակները եւ ֆայլերը, ապա վտանգուած էք:

# Մանկապատանեկան

## ՄԱՂԹԱՆՔՆԵՐՈՒ ՔԱՐՏԵՐԸ ՀԻՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հակառակ հեռաձայնին եւ ինքընթին, մաղթանքի քարտեր դրկելու սովորութիւնը տակաւին կը յարգուի: Ամէն տարի հազարաւոր, միլիոնաւոր մարդիկ իրարու կը գրեն իրարու բարի տարի մաղթելու համար:

Դեկտեմբերի առաջին օրերէն արդէն մաղթանքի քարտերը կը լեցնեն նամակատուփերը: Անոնք առաջին հերթին կը հասնին ձափոնէն, եւ ապա՝ անզիլիախօս երկիրներէն, ուր «պէսք ուիշեր»ը (յաւագոյն մաղթանքները) կը փոխանակուին յատկապէս Կաղանդին: Անոնք կը շարունակեն ծանրաբեռնել նամակաբաշխին պայուսակը մինչեւ Յունուարի վերջը, որ ուշացողներուն վերջին առիթն է:



Այս սովորութիւնը հաւանաբար ծնած է Անգլիոյ մէջ, 19րդ դարուն: Առաջին մաղթանքի քարտը կրնայ կրած ըլլալ 1843 թուականը, երբ դրոշմաթուղթերը սկսած են երեւան ելլել:

Պատկերներուն ներկայացուցած նիւթերը անհամար են. ձիւնոտ տեսարաններ, գեղեցիկ եղեւիններ, մեծ արջուկներ, մսուրներ, մոմեր, ոսկեգոյն ժապաւէններ...

\*\*\*

Հարիր վաթսուն տարիներէ ի վեր այս սովորութիւնը ուրախացուցած է մեծ թիւով անզիլիախօսներ, յատկապէս անզիլիաքիները, որոնք ամէն Նոր Տարիին կը փոխանակեն մտաւորապէս եօթը հարիր միլիոն քարտ: Սակայն 20րդ դարու սկիզբն է, գունաւոր տպագրութեան շնորհիւ կը ծնի իսկապէս մաղթանքի քարտերու «նորոյթը»:

\*\*\*

Կան անմեղ, որոնք տպել կու տան իրենց անձնական քարտերը, իսկ ուրիշներ անձնապէս կը պատրաստեն իրենց քարտերը, պատիկ գծաքրութիւն մը, նկար մը եւ ձեռագիր երկտող մը: Իսկ ամէնէն ծոյլերուն համար գոյութիւն ունին պատրաստ դրութիւններով քարտեր, զորս անոնք կրնան պարզապէս ստորագրել:

## ՄԻՒՍ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ

Պելձիբայի, Հոլանտայի, հիւսիսային եւ արեւելեան Ֆրանսայի պատկերները արդէն իրենց նուէրները սկսան ստանալ անցեալ շաբաթուրէն սկսեալ: Ոչ Կաղանդ Պապան թուականները չէ շփոթած: Պարզապէս, անոնց այցելած է Սուրբ Նիքոլասը:



Կարանդ Պապային նման ան ալ ծեր է եւ ունի ճերմակ մօրուր: Սակայն ան ունի ո՛չ մեծ կողով, ո՛չ ալ հիւսիսային եղջերու եւ տուները կ'այցելէ 6 Դեկտեմբերին: Ան ունի կտակ մեծ պայուսակ մը, ցուպ մը եւ եպիսկոպոսի թագ մը, կը ճամբորդէ իշու մը վրայ նստած: Չմոռնանք նաեւ անոր ընկերացող Մեծոյ Պապան, որուն պաշտօնն է սրբաբարձ քարի չկեցող պատկերները:

Մտաւորապէս, Սուրբ Նիքոլաս եղած է 4րդ դարուն Փոքր Ասիոյ մէջ ապրող եպիսկոպոս մը, որ հրաշքներ կատարած է փոթորիկէն փրկելով նաև ստանիէն փրկած է

**NEW 2003-2004 ARMENIAN NEW YEAR & XMAS SONGS**  
RECORDED IN YEREVAN

A Daniel Der Sahakian Production

**ՎՍՏԱՆ ԵՐԿԻ**

ՉՍԵՆ ՊԱՊԸ ՊԱՐՈՒՍ Է ԸՈՉՄԸՒ

ՆՈՐ ՏԱՐՈՒՄՅ ԵՒ Ս. ՏՆՈՒՆ ԴԻ ԵՐԳԵՐ

Օրիգինալ CD-ները եւ քասեթները կը վաճառուին միայն **VOICE OF STARS** ի մօտ  
92 Marash Street, Bourj Hammoud, Lebanon Tel.: 961-1-445449  
World Wide: VOICE OF STARS 1875 Queensberry Road Pasadena, CA, 91104 USA, Telefax: 1-626-797 12 28

Մի՛ մոռնար խնդրելու Կաղանդ Պապայէն ՊԶՏԻԿ – ՄԶՏԻԿի գաւաթը, Նոր Տարուան լաւագոյն նուէրը



Գաւաթները կարելի է գտնել հետեւեալ գրախանութներուն մէջ.  
– Բամպագային, «Յաղպոյեան» կեդրոն, Պուրճ Բամուտ  
– Նարեկայի, Պուրճ Բամուտ  
– Obellx, Անթիլիաս

## ՉԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

### ԿԱՂԱՆԴԻ ՔԱՐՏԵՐ

Արդէն Դեկտեմբերի կեսն է եւ ժամանակն է դրկելու Նոր Տարուան մաղթանքներու քարտերը: Այս սիւնակին մէջ պիտի գտնես երկու օրինակներ, սակայն կրնաս նաեւ ասոնցմէ ներշնչուելով ստեղծել քու անձնական օրինակներդ:

#### Ա) ԶԻՒՆԵՍԱՐԴԸ

Պէտք ունիս. – Կապոյտ, մուշ կանաչ, ճերմակ խաւաքարտի, ճերմակ կուշի, ներկերու, խէժի, մկրատի:

1.- Կապոյտ խաւաքարտին վրայ գծէ եւ կտրէ 26 սմ. x 21 սմ. քառանկիւն մը: Չորս երկուքի ծալէ:

2.- Ճերմակ խաւաքարտէն երկուքի պատուէ: Չորս փակցուր քարտին վարը, կողքին վրայ եւ ներսի բաժինին մէջ:

3.- Կանաչ խաւաքարտին վրայ գծէ եւ կտրէ երկու պզտիկ երեւելիներ: Չորս փակցուր քարտին կողքին վրայ:

4.- Կուշուր գծէ ձիւնի փաթիլները քարտին կողքին վրայ եւ ներսի բաժինին մէջ:

5.- Ճերմակ խաւաքարտին վրայ գծէ ձիւնեմարդ մը: Մի՛ մոռնար մարմնին երկու կողմերը գծել լեզուակներ, ձիւնեմարդը քարտին վրայ փակցնելու համար: Ներկելով աւելցուր ձիւնեմարդին մանրամասնութիւնները (աչք, թիթ, բերան...): Չորս կտրէ եւ երկանքին երկուքի ծալէ: Օտիկ նաեւ լեզուակները:

6.- Մալուած ձիւնեմարդը դիր քարտին մէջ: Լեզուակներուն վրայ խէժ դիր եւ ձիւնեմարդը փակցուր քարտին մէջ:

#### Բ) ԿԱՂԱՆԴԻ ԾԱՌԸ

Պէտք ունիս. – Կարմիր եւ ճերմակ խաւաքարտ, ոսկեգոյն ներկ մատիտի, խէժի, մկրատի, պտերի մօտաւորապէս 14 սմ. երկար ճիւղ մը:

1.- Պտերի ճիւղ մը պաշտ գիրքի մը էջերուն մէջ Կաղանդէն քանի մը օր առաջ եւ զայն հանէ, երբ քարտը պիտի շինես:

2.- Կարմիր խաւաքարտին վրայ գծէ եւ կտրէ 21,5 սմ. x 20 սմ. քառանկիւն մը: Չորս երկուքի ծալէ:


3.- Ճերմակ խաւաքարտին վրայ գծէ եւ կտրէ 16,5 x 6,5 քառանկիւն մը: Չորս փակցուր քարտին կողքին վրայ:

4.- Ճերմակ քառանկիւնին վրայ փակցուր փափկացած պտերի ճիւղը: Վարէն բաժին մը ձգելով:

5.- Կարմիր խաւաքարտին վրայ գծէ եւ կտրէ թաղար մը: Չորս զարդարէ ոսկեգոյն մատիտով եւ ապա փակցուր ճիւղին տակը: Այս «Կաղանդի ծառին» զազաթը ոսկեգոյն մատիտով գծէ եւ ներկէ աստղ մը:

6.- Ճերմակ քառանկիւնին շուրջ շրջանակ մը գծէ ոսկեգոյն մատիտով:


## Ժ Ա Մ Ա Ն Յ




Ո՞վ պիտի ուտէ պանակը:



Վայրկեանները գումարէ գիտնալու համար, թէ ո՞վ պիտի յաղթէ:



Կրնա՞ս գտնել իւրաքանչիւր գնդակի համապատասխանող գաւազանը:



Կրնա՞ս ընդօրինակել նկարը՝ քառակուսիներուն հետեւելով:

Պատրաստեց՝ ՅՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

[www.aztagdaily.com](http://www.aztagdaily.com)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԽԱԶԻԿ ՊԱՍՏԱԾԵԱՆԻ ԳՐԱՊԵՏԱՐԱՆԻ 21րդ տարեգրքին...

ԱՐՏԱԾԵԱՆ ՏԵՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆԻ մահուան 10րդ տարեիցին...

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՏՕՆԻԿԵԱՆԻ մահուան քառասունըին առիթով...

ՍՕՍԻ ՈՒՐՖԱԼԵԱՆԻ մահուան 9. տարեիցին առիթով...

ՄԿՐՏԻՉ ԽՇՇՐԼԱՐԵԱՆԻ (ԱԽԱԳ ՍԱՐԿԱԽԱԳ) մահուան...

ՍԻՐԱԿՐԴ ՊՈՅԱԾԵԱՆԻ մահուան քառասունըին առիթով...

ՊԵՅՐՈՒԹ ԶԵՄԱԿ ՍՏԵՓԱՆ ԹԻԹԻՋԵԱՆԻ մահուան քառասունըին առիթով...

ԱԽԱԳ ՕՂԱՆԵՍԵԱՆԻ մահուան Ե. տարեիցին առիթով...

ԼՈՒԻՋԱ ՊԵՐԵՐԵՃԵԱՆԻ (ԾՆԵՎ՝ ՄԱԳՍՈՒՏԵԱՆ) մահուան...

ԱԽԵՏԻՍ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆԻ (մահացած՝ Հայկա) մահուան...

ԱՆԺԵԼ ՍԱԼՈՐԵԱՆԻ մահուան քառասունըին առիթով...

ԱՐՇԱԼՈՅ ՄԱՆՃԵԱՆԻ մահուան քառասունըին առիթով...

ԿԻՐԱԿՈՍ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ (մահացած՝ Լուս Աճճեր) մահուան...

ՃԻՎԵԼ ՄԱՐԿՈՍԵԱՆԻ մահուան Ա. տարեիցին առիթով...

ՀՆԻՓՍԻՍԵ ԵԱՐՈՅԵԱՆԻ մահուան Բ. տարեիցին առիթով...

ԽԱԶԱՐԱՌ ԹԻԻ 5613 Պատասխանե՛ք՝ Տ.Ս. ԱՐԱԶԱՐԵԱՆ

Table with 11 columns and 11 rows for a crossword puzzle.

- 1. Լիուլի լեցուած - Դրկից տառեր: 2. Իսրայելի առաջին քահանայապետը - Լեբան շուք մասը: 3. Եանի - խլատեռ - Այրուրենէն: 4. Մեծ - Նուրբ ախլուր: 5. Տառապիլ - Նոյն գիրերը: 6. Հայաստանի հնագիտութիւն - Չաչ - Պատշաճ: 7. Ժողով - Փոքրացնող մասնիկ: 8. Անձնական դերանուն - Կաքաւազգի թռչուն: 9. Որոշուած գին - Օղակ: 10. Բարձրութիւն - Առեղ: 11. Ժողովրդային - Տանջող:

Թի 5612 ԽԱԶԱՐԱՌԻՆ ԼՈՒԹՈՒՄԸ



bezdig\_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամահոյներու փակման սակագինները հետեւեալներն էին երէկ. Սուրիական թղթուկի 28,70 - 28,90 լ.ո. Բուէյթեան տինար 5112,00 - 5137,00 լ.ո. Եթովպիական տինար 2121,00 - 2131,00 լ.ո. Պահիրէյեան տինար 3985,00 - 4010,00 լ.ո. Ա.Ս. Էմիրութեան տինար 410,75 - 412,75 լ.ո. Բարբադոսի տինար 413,75 - 415,75 լ.ո. Սէլուսական տինար 402,00 - 404,00 լ.ո. Օմանեան տինար 3895,00 - 3920,00 լ.ո. Եգիպտական կինէ 420,00 - 430,00 լ.ո. Անգլիական սթրէյթին 2635,00 - 2645,00 լ.ո. Չուիցերիական ֆրանք 1190,00 - 1195,00 լ.ո. Թրքական լիրա 104,50 - 105,00 լ.ո. Կիպրական փաուստ 3140,00 - 3165,00 լ.ո. Զափոնական հապար եէն 13,85 - 13,95 լ.ո. Ամերիկեան տոլար 1501,00 - 1515,00 լ.ո. Քանադական տոլար 1147,00 - 1152,00 լ.ո. Աւստրալիական տոլար 1115,00 - 1120,00 լ.ո. Եւրօ 1845,00 - 1855,00 լ.ո.

ՈՍԿԻ Անգլիական մէկ ոսկի 156,000 - 161,000 լ.ո. Իրանեան մէկ ոսկի 141,500 - 146,500 լ.ո. Օմանեան մէկ ոսկի 131,000 - 136,000 լ.ո. Մեքսիկական փետուս 750,000 - 770,000 լ.ո. Մէկ քիլոյրամ ձոյլ ոսկի 19,600,000 - 19,800,000 լ.ո. Մէկ օսն ոսկի 407,00 - 407,50 \$ Մէկ օսն արծաթ 5,60 - 5,62 \$

Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը. Եւրօ 1.2250 - 1.2255 Քանադական տոլար 1.3104 - 1.3109 Բուիցերիական ֆրանք 1.2837 - 1.2842 Զափոնական եէն 107.79 - 107.84 Մէկ սթրէյթին 1.7475 - 1.7480

Մէկ քոլար 565 դրամ

ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գինի Ա. ճշդում Գինի Բ. ճշդում Ա. կարգ 4.21 4.28 Բ. կարգ 4.26 4.26

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ) Ձեր գաւակները, ինչ տարիքի մէջ ալ ըլլան անոնք, պատեալ ու պատրուակ պիտի փնտնեն ձեզի հետ վիճարանելու, բայց դուք պիտի կարենաք ի գործ դնել ձեր հեղինակութիւնը: ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) Եթէ ունիք գաղտնիք մը, ընտանեկան տեսակի, կայն երեւան մի հանգ: Ձեր խօսքերը կշռեցէք, որովհետեւ կրնաք ծուղակի մէջ իյնալ անգիտակցաբար: Օրը խոհեմութիւն կը պահանջէ ձեզմէ: ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս) Ընտանեկան յարկին տակ, միեւնոյն սերունդին պատկանող անդամներուն միջեւ (քոյր, եղբայր, գարմիկներ) պիտի ստեղծուի ճշմարտ ու լարուած մթնոլորտ: Դիմեցէք տարեց անձի մը միջնորդութեան իրեն իրաւաբար: Հանդարտ եղէք: ԽՆՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս) Այսօր պիտի կատարէք բազմատեսակ գնումներ, բայց նախապէս հաշիւ մը ըրէք ձեր գնելիքին ու ձեր ունեցած գումարին համար: Ի վնաս ձեզի սխալներ գործելէ հետո կեցէք: ԱՌԻԻՎ (24 Յուլիսէն 23 Օգոստոս) Ուրիշները մի մեղադրէք, թէ չեն կրնար ձեր ծրագիրները իրագործելու օգտակար ըլլալ: Պէտք է դուք կատարէք ծրագիրները յաջողակութեամբ աշխատանքը: ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Ծանրաբեռնուած աշխատանքները պատեալ կը դառնան, որ ձեր բուն փախչի: Դարմանելու համար քունի պակասը, այսօր մնացէք ձեր անկողինին մէջ եւ հանգստացէք: Քունը անհրաժեշտ է կերակուրին չափ: ԿՇԻՌԻԲ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) Ձեր բարեկամներուն միջեւ ստեղծուած աղմուկը փոխանակ մեղմացնելու կամ չբացնելու, ընդհակառակը, իւր կը բաժնէ կրակին վրայ: Խոհեմ եղէք: ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Յունուար) Եթէ վաճառական էք կամ առեւտուրով կը զբաղիք, գործերը լաւ պիտի ընթանան այս օրերուն: Այսուհետեւ գործ ծանրաբեռնուած պիտի ըլլաք եւ պիտի չկարենաք ընտանեկան հանդիպումները վայելել: Հոգ չէ, համբերեցէք: ԱՂՆՆԱԻՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) Լաւ յարգեցէք երթեւեկի օրէնքները, ապա թէ ոչ կ'ենթարկուիք ծանր տուգանքի: Քաղաքացիական պարտականութիւնները յարգեցէք լիովին: ԱՅՏԵՂՋԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) Դրամական դժուարութիւնները կը մտահոգեն ձեզ. կը մտածէք ձեր ապագային մասին: Երանի թէ կարենաք չմտածել, որովհետեւ Աստուծոյ վրայ ձեզ ընտանեկան միջոցն է փրկուելու կարգ մը հարցերու կարգադրութեան: ԾՈՎԱԼՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար) Այսօր անգուշուրեամբ պիտի գործէ կարգ մը սխալներ, բայց պիտի կարենաք դուրս ելլել անվնաս: Ուշադիր եղէք ձեր շարժումներուն եւ ձեր լեզուին: ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) Ձեր ընտանի անասունը կարիքը ունի խնամքի, իսկ դուք բնաւ ուշադրութիւն չէք ընդհանր: Անփութ մի մնաք նման հարցի մը պարագային. վնասուողը դուք կ'ըլլաք:

ՕՐԱՏԵՏՐ

ՊԱՐ / ՅՈՒՑԱՀԱՆԳԵՍ / ԵՐԳ

ՎԻՐՓԻ ՓԱԽԻՆԵՆԻ ՍՈՒՆՈ ՊԱՐԻ ՀԱՄԵՐԳՆԵՐԸ

15 տարեկանէն ի վեր Վիլփի Փախինէն կը պարէ: Երիտասարդ ֆինլանդացիներն այսօր արդէն ունի պարի իր իրաւատուկ ոճը: Իր պարերը, զորս ներկայացուցած է քանիցս Եւրոպայի, Հիւսիսային Ամերիկայի, Աֆրիկայի եւ Աւստրալիոյ ցամաքամասերուն վրայ, կարծէք հանդիպում մըն է լուրջեան հետ: Պարադրուը նոյնպէս կը պատկանի Փախինէնի, որ իր ստեղծագործութիւններուն մասին կ'ըսէ. «Նախ՝ շարժումը լուրջեան մէջ. ապա կու գայ երաժշտութեան հետ հանդիպումը»:



Վիլփի Փախինէն կը սորվի եւ կը ներշնչուի, իր բացատրութեամբ, «շարժումի հնագիտութեան»: Ան կը հետեւի Հնդկաստանի, Զափոնի եւ այլ շրջաններու մէջ բնակող գեղախումբերու շարժումի եւ պարի աստիճաններէն՝ ստեղծելով իր ուրույն արուեստը: Այսօր եւ վաղը երեկոյեան ժամը 8:30ին, «Մոնօ»ի սրահին մէջ Փախինէն պիտի ներկայացնէ մէկ ժամուան յայտագիր մը, որ պիտի ընդգրկէ չորս սոյններ: Արդի պարի սիրահարները առիթը պիտի ունենան ընդերջնելու Փախինէնի պարը՝ Պախի, Պրոմարի, Իշիժիմայի եւ Լուսիլիքարի երաժշտութեամբ:

ԱՅՍՈՐ

Նկարչական ցուցահանդէս՝ արցախցի գեղանկարիչ Սամուէլ Գաբրիելեանի գործերուն: «Աղբալեան - Հ.Բ.Մ» Մարգարէտապետի համալիրին մէջ, 13:00 14 Դեկտեմբերի առաւօտեան ժամը 11:00էն 21:00: Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ իրանահայ երիտասարդ արուեստագետներու գործեր, ԵՌԻՆԵՍ-ՔՕ, մինչեւ 12 Դեկտեմբեր: Հայկական ձեռագործներու ցուցահանդէս՝ «Փրոմընտ» պանդոկին մէջ, մինչեւ 19 Դեկտեմբեր: Արամ Խաչատուրեանի 100ամեակ. կը ներկայացնէ Ջաքար ՔՆՉԻՅԵԱՆ, 14 Դեկտեմբերի ժամը 20:00ին, Հ.Բ.Մ. - Հ.Բ.Ը. «Ջապլի Մոլոտեան» կղերուն, Հըրշ Թապը: Նկարչական ցուցահանդէս՝ «Տը լա փենիլը սեմփլըման», Սամիր Թապէթի գործերը, «Ալիս Մոդապապ» ցուցասրահ, մինչեւ 24 Դեկտեմբեր: Լուսակապարակ ցուցահանդէս՝ «Հիսթորալ տորմիր տեպու», Ֆուլվիո Քոստիլի գործերը, «Էսփաս Էս. Տէ» ցուցասրահ, մինչեւ 13 Դեկտեմբեր: Լուսակապարակ ցուցահանդէս՝ «Լա Ռըշերշ տը լ'օմ օ սապլլ», Անժելիքա Երեմուրի գործերը, «Կէօթէ» հիմնարկ, մինչեւ 19 Դեկտեմբեր: Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Կրանտ Է Ժեօն», «Ժամին Ռուպեյո» ցուցասրահ, մինչեւ 31 Դեկտեմբեր: Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Սըրսոք» քանգարանի «Աշնանային սալուն» քանգարանին ցուցասրահին մէջ, մինչեւ 17 Յունուար: Նկարչական ցուցահանդէս՝ «Բիլ պիլթ», Քրիս Սեբասթիան - Լէյնի գործերը, «Փընելլ» ցուցասրահ, մինչեւ 7 Յունուար: Թատրոն՝ «Քամա ալ արտ, քաղաքի մին... ֆաուր», ժամը 20:30ին, «Քաղիկ տի Լիպան», մինչեւ 29 Փետրուար: «Մեղեան երգեր»՝ 20 Դեկտեմբերի ժամը 10:30ին, «Մոնօ» սրահին մէջ: Ելոյթ կ'ունենայ Դեորգ Քրեմլերեան՝ դաշնակի ընկերակազմով: Քամիլիայի եւ մասնակցութեամբ Համազգայինի «Կարկաչ» երգչախումբին:

ՕՂԵՐԵՆՈՅԹ

ՀԱՐԱԹ, 13 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003 ՊԵՅՐՈՒԹ ԱՍՊՈՏ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՅԵՐԵՎ՝ 22°C ԳԻՇԵՐ՝ 16°C ՌՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 53%

ԱԶԳԱԿ 50 ՏՄԱՐԻ ԿՈՒՆԱԿ 13 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1953

ԱՐԱԲՆԵՐԸ ՊԻՏԻ ԶՀՐԱՄԱՐԻՆ ԻՍԿԵՆՏԵՐՈՒՆԻ ՍԱՆՃԱԳԷՆ

«ԱՆԻԿԱ ՆՈՒԻՐԱԿԱՆ ՄԵԿ ԿՏՈՐՆ Է ՄԱՅՐ ԸԱՅՐԵՆԻՔԻՆ ԵՒ ԵՏ ՊԻՏԻ ԱՆՆԵՆ»

ԱՐԱԲ ԹԵՐԹ՝ ՄԸ ԹՈՒՐԻՔԻՈՅ ՄԱՍԻՆ Անտիոքէն կը հեռագրեն Պոլսոյ թերթերուն... «Արաբները - կ'ըսէ թուրքիկը, - երբեք պիտի չհրաժարին հայրենիքին անբաժան աշխարհի հողամասէն, որ անպատեալ պէտք է վերադարձուի մայր հայրենիքին՝ Սուրիոյ: Անիկա հիւսիսային Սուրիոյ մէկ կտորն է: Մեզի հանդէպ նուազողական նպատակներ սնուցանող մեր դրացիին յոռի մտադրութիւնը ցոյց կու տայ թուրքերուն կողմէ բռնագրաւումը Իսկենտերուկի ծոցին եւ սանձագին, որ մեր հայրենիքին բանալին է: Որքան ալ դժուարութիւնները մեծ ըլլան, պէտք է պատրաստուիք մեզմէ գողցուած հողերը վերագրուելու համար: Այսօրուցիկը ստորագրած է կոմիտէին կողմէ ընդհանուր քարտուղար Նետիմ Խաթապուլիէ:

ԱՅՍՈՐ 13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ

1888.- Նիսի մէջ (Ֆրանսա) կը մտնի հայագի գոր. Լորիս Մելիքոֆ, ռուս պետական մարդ եւ մեծ ռազմավար: Աղեքսանդր Բ. ցարի օրով իրեն յանձնուած էր Ռուսաստանի պետական վարչութիւնը: 1940.- Մահ տաղանդաւոր նկարիչ Ստեփան Աղաճանեանի:

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



# ԱՇԽԱՐՀ



## ԼԻԲԱՆԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ԱՅՍՕՐ՝ ԱՇՏ - Շ. Մ. Ը. Մ.

Լիբանանի ֆուտբոլի պիտեանութեան 6րդ հանգրուանի բացման մրցումին, այսօր կէսօրէ ետք ժամը 2:15ին, Պուրձ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի կ'ունենայ Սաժէս - Սաֆա մրցումը:

Յաջորդաբար երկրորդ մրցումն ըլլալով Հ. Մ. Ը. Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը այսօր իր մրցումը կը կատարէ Պէյրութի Քաղաքապետարանի դաշտին վրայ, ուր երեկոյեան ժամը 8:30ին հիւրը կ'ըլլայ Ահտի: Իսկ Սայտայի Քաղաքապետարանի դաշտին վրայ Հ. Մ. Մ. պիտի մրցի Նըժմէի դէմ:

Ստորեւ՝ 6րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

●ԱՅՍՕՐ	ԺԱՄ	ԳԱՇՏ
Սաժէս - Սաֆա	2:15	Պ. Համուտ
Ահտ - Հ. Մ. Ը. Մ.	8:30	Պէյրութ

●ՎԱԳԸ		Պէյրութ
Շապապ Սահէլ - Օլիմպիք	2:15	Թրիփոլի
Սալամ - Անսար	2:15	Սուր
Թատամոն Սուր - Մապարա	2:15	Սայտա
Հ. Մ. Մ. - Նըժմէ	4:45	

## ՓԻՆԿ ՓՈՆԿ. ԱՐԱԲԱԿԱՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՂԶԿԱՆՅՅ ԿԱԶՄԸ Կ ԱՐՇԱԻԷ

Մոն Լա Սալի մէջ տեղի ունեցող փինկ փոնկի արաբական ախոյեան խումբերու 15րդ ախոյեանութեան մրցաշարքին, երէկ Հ.Մ.Ը.Մ.ի աղջիկները դարձեալ անխնայ եղան իրենց մրցակիցներուն՝ Պահրէյնի (Պահրէյն) եւ Ատապ Ուալ Ռիտա Քֆարշիմայի (Լիբանան) նկատմամբ, երկուքին դէմ ալ 3-0 արդիւնքով յաղթանակներ արձանագրելով:



Մրցաշարքի մասնակցող Հ.Մ.Ը.Մ.ի աղջկանց կազմը: Չախէն աջ՝ Չաօ Զինկնի.

Լարա Զէչէպաշեան, Մարիամ Սոմուհեան - Սահակեան, Նոէլ Զէշիշեան, Լիզա Պարիշեան եւ Բաֆֆի Սուհեյրլեան:

Իսկ Բֆարշիմայի դէմ տեղի ունեցած մրցումին, առաջին սէթը շահեցաւ Մարիամ Սոմուհեան - Սահակեան, որ պարտութեան մատնեց խումբին նորվեկիացի մարզիկ՝ Բրիսթին Տովալը: Զաօ Զինկնի պարտութեան մատնեց Ռուպա Պրսէյպէր, իսկ Լիզա Պարիշեան՝ Ռիթա Պրսէյպէր:

Այսօր՝ Շաբաթ, առաւօտեան ժամը 9:00ին, Հ.Մ.Ը.Մ.ի աղջիկները իրենց չորրորդ մրցումը կը կատարեն Քարամէի դէմ (Սուրիա): Վաղը՝ Կիրակի, կէսօրէ ետք ժամը 4:00ին Հ.Մ.Ը.Մ. կը մրցի Անքուտ Չահապիի դէմ (Թունիս):

Հ.Մ.Ը.Մ. իր վերջին մրցումը կը կատարէ յառաջիկայ երեքշաբթի, 16 Գեկտեմբերին՝ եգիպտական Միլի խումբին դէմ (ժամը 4:00ին): Այս վերջին մրցումը արատականի բնոյթ պիտի ունենայ, նկատի ունենալով, որ երկու խումբերն ալ ցարդ իրենց կատարած բոլոր մրցումներուն ընթացքին յաղթանակներ արձանագրած են եւ կը նկատուին զօրաւորագոյն կազմերը:

## ՊԱՍԵԹՊՈԼ

### Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՇԱԲԱԹԱՎԵՐԶԸ

Լիբանանի տղոց պասթեթպոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 5րդ հանգրուանի մրցումներուն, այսօր՝ Շաբաթ, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբը ժամը 18:00ին Սաժէս ժրտէյտի դաշտին վրայ կը ձակարկէ Ռիտա Ֆէյրուսիի դէմ:

●ԱՂԶԿԱՆՅՅ Բ. դասակարգի ախոյեանութեան 5րդ հանգրուանի մրցումներուն, վաղը՝ Կիրակի Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի աղջիկները կը ձակարկեն Շապապ Ռիտա Ֆէյրուսիի դէմ: Մրցումը տեղի պիտի ունենայ Շաւվիլի դաշտին վրայ, ժամը 13:00ին:

Տղոց նման, Հ.Մ.Ը.Մ.ի աղջիկները եւս ցարդ իրենց կատարած չորս մրցումներուն ալ յաղթանակ արձանագրած են յաջորդաբար պարտութեան մատնելով Ֆրէր Պէյթ Մէրին (20-0, ի բացակայութեան), Ֆիտա Սայտան (65-30), Պու Սթարվը (59-37) եւ Շանվիլը (46-43):

## ՖՈՐՄԱԿԱՆ 1

### ՄԱՆՅԻ ՔՈՒՐԻ ԿՐԱՆ ՓՐԻՆ՝ ՅՈՒԼԻՍ 4ԻՆ

Ֆորմիլա 1ի ֆեաթրասիոնը երէկ յայտարարեց, որ 2004 տարւան աշխարհի ախոյեանութեան 10րդ կրան փրին՝ Մանի Բուրը տեղի պիտի ունենայ յառաջիկայ տարի՝ Յուլիս 4ին, րէէն այն մտազայնութիւնը կար, որ անիկա տեղի չունենար:

- Յունիս 13.- Քանատա (Մոնթէպ)
- Յունիս 20.- Միացեալ Նահանգներ (Ինտիմափոլիս)
- Յուլիս 4.- Ֆրանսա (Մանի Բուր)
- Յուլիս 11.- Բրիտանիա (Սիլվերսթոն)
- Յուլիս 25.- Գերմանիա (Հոքընհայմ)
- Օգոստոս 15.- Հունգարիա (Պուտափէշթ)
- Օգոստոս 29.- Պելճիքա (Սփա)
- Սեպտեմբեր 12.- Իտալիա (Մոնպա)
- Սեպտեմբեր 26.- Չինաստան (Շանկիայ)
- Հոկտեմբեր 10.- Ճափոն (Սուպուր)
- Հոկտեմբեր 24.- Պրապիլ (Սան Փաուլ)

### «ՉԵՄՓԻԸՆԶ ԼԻԿ»Ի ՎԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆ



Երէկ, Նիոնի մէջ (Չուիցերիա) տեղի ունեցաւ «Չէմփիընզ Լիկ»ի Բ. հանգրուանի, ինչպէս նաեւ Ե. Է. Է. Բ. Ա.ի ֆուտբոլի մրցաշարքին Գ. հանգրուանի մրցումներուն վիճակաձգութիւնը:

«Չէմփիընզ Լիկ»ի մրցաշարքին ամէնէն կարեւոր եւ տաք ձակատումը տեղի պիտի ունենայ ֆուտբոլի երկու հսկաներու՝ Պայէրն Միւնիխի եւ Ռէալ Մատրիտի միջեւ:

Այլ կարեւոր եւ տաք ձակատումներ պիտի ըլլան նաեւ Տեփոթիօ Քորուսա - Եուվենթուս, Շթուրպարթ - Չելսի եւ Սելթա Վիլո - Արսենալ մրցումները:

Երթի մրցումները տեղի պիտի ունենան յառաջիկայ տարի 24-25 Փետրուարին, իսկ դարձի մրցումները՝ 9-10 Մարտին:

Ե. Է. Է. Բ. Ա.ի ֆուտբոլի մրցաշարքին, Գ. հանգրուանի մրցումներուն, Եւրոպայի նախկին ախոյեան՝ Լիվրփոլ պիտի ձակարկէ Լեւսքի Սոֆիայի դէմ, մինչ Պարսելոնա՝ Պրոնտպիի դէմ: Մարսիլի մրցակիցը պիտի ըլլայ ուքրաինական Տիւրքոմեթրոպոլ խումբը:

Երթի մրցումները տեղի պիտի ունենան 26 Փետրուար 2004ին, իսկ դարձի մրցումները՝ 3 Մարտին:

Ստորեւ՝ երկու մրցաշարքերու վիճակաձգութիւնը.

●«ՉԵՄՓԻԸՆԶ ԼԻԿ» ԵՐԵՎԱՆԻ, 24 ՓԵՏՐՈՒԱՐ

Սելթա Վիլո (Սպանիա) - Արսենալ (Անգլիա)	Պ. Միւնիխ (Գերմանիա) - Ռ. Մատրիտ (Սպան.)
Սփ. Փրակա (Չեխիա) - Ա. Ա. Միլան (Իտալիա)	Լոք. Մոսկուա (Ռուսիա) - Մոնաքո (Ֆրանսա)

ՉՈՐԵՔՆԵՐԻ, 25 ՓԵՏՐՈՒԱՐ

Շթուրպարթ (Գերմանիա) - Չելսի (Անգլիա)	Փորթո (Պորտուգալ) - Մ. Եունայթըտ (Անգլիա)
Ռէալ Մատրիտ (Սպանիա) - Լիոն (Ֆրանսա)	Տեփ. Քորուսա (Սպան.) - Եուվենթուս (Իտալիա)

●ԵՆՒ. Է. ԷՖ. Ա.

Պրոնտպի (Գանիա) - Պարսելոնա (Սպանիա)	Փարմա (Իտալիա) - Կէնչիերպիլիդի (Թուրք.)
Պենֆիլթա (Փորթ.) - Ռուսիայի (Նորվեկիա)	Մարսիլ (Ֆր.) - Տիւրքոմեթրոպոլ (Ուքրաինա)
Սելթա (Սկոտլանդ) - Ռեալ Միլան (Իտալիա)	Փերուսի (Իտ.) - Փ. Ս. Վ. Այնտրուպ (Հոլ.)
Կրոքի (Լեհաստան) - Պորտո (Ֆրանսա)	Վալենսիա (Սպանիա) - Պէշիքթաշ (Թուրքիա)
Կայաքասարայ (Թուրք.) - Վիարէալ (Սպանիա)	Ֆ. Ք. Պրիմ (Պելճ.) - Տեպրեչէն (Հունգարիա)
Սոչո (Ֆրանսա) - Ինթեր Միլան (Իտալիա)	Լիվրփոլ (Անգլ.) - Լեւսքի Սոֆիա (Պուլ.)
Սպ. Մոսկուա (Ռուսիա) - Մայորքա (Սպանիա)	Կալիպոնիֆիսփոլ (Թուրք.) - Ա. Էս. Ռոմա (Իտ.)
Օքսֆորդ (Ֆր.) - Փանաթինայթոս (Յունաստան)	Վալերենկէն (Նորվեկիա) - Նիքիթալ (Անգլիա)

### ԶԱԼԻՈ Ա. ԷՍ. ՌՈՄԱ ՊԻՏԻ ԸԱՐՈՒՆԱԿԷ՝ ՄԵԱԼ ԱՆ ՊԱՐՏԵԼԻ

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Քալչիօ) 13րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրութի ժամով).

●ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Ուտինէպէ - Լէչէ	19:00
Փերուսիա - Սամոտրիա	21:30
●ՎԱԳԸ	
Անքոնա - Լացիո Ռոմա	16:00
Պարմա - Ինթեր Միլան	16:00
Պրեշիա - Եւփոլի	16:00
Եուվենթուս - Փարմա	16:00
Ռեճինա - Բիելո	16:00
Ա. Էս. Ռոմա - Մոտենա	21:30

### ՊՈՒՆՏՈՒԿԱ ՊԱՅԵՐՆ ՄԻՆԻԻՒ - ԾՅՈՒԹԿԱՐԹ՝ ԳԱԳԱԹԻ ԶԱԿԱՏՈՒՄ

Գերմանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Պուներսլիկա) 16րդ եւ երթի նախափուլի հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրութի ժամով).

●ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Քայլերայտութեան - Շալքէ	16:30
Պայէր Լեւերքուզըն - Վերտըր Պրեմըն	16:30
Պայէրն Միւնիխ - Շթուրպարթ	16:30
Համպուրկ - Ֆրայպուրկ	16:30
Պոխում - Այնթրախթ Ֆրանքֆորթ	16:30
Հանպ Ռուքոք - Բէտլ	16:30
Հերթա Պերլին - 1860 Միւնիխ	16:30
●ՎԱԳԸ	
Վոլֆսպուրկ - Հանովըր 96	18:30
Պ. Մէօնընկլատպախ - Պ. Տոքթոն	18:30

### ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ԱՅՍՕՐ՝ ՓԱՐԻԶ ՍԵՆ ԺԵՐՍԵՆ - ՊՈՐՏՕ

Ֆրանսայի ֆուտբոլի ախոյեանութեան 18րդ եւ երթի նախափուլի հանգրուանի մրցումներուն, այսօր բացման մրցումին, Փարիզ Սեն Ժերմէն իր դաշտին՝ «Փարք Տը Փրէս»ի մէջ կարեւոր մրցում մը ունի կատարելիք, երբ հիւրընկալէ Պորտոն:

Յաղթանակի մը պարագային, մայրաքաղաքի կազմը 3րդ դիրքէն կրնայ բարձրանալ 2րդ դիրք, անշուշտ եթէ Լիոն պարտութիւն մը կրէ Պարսիայի դաշտին վրայ:

Այսօր տեղի ունենալիք Մոնփելիէ - Մարսիլ մրցումը յետաձգուեցաւ այլ օրուան մը, նկատի ունենալով որ «Մոսոն»ի դաշտին մէջ տեղացող անձրեւները մրցումին յետաձգման պատճառ դարձան:

Ստորեւ՝ 18րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

●ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Փարիզ Սեն Ժերմէն - Պորտո	18:15
Սոչո - Ամաքսիօ	21:00
Թուլուզ - Նիս	21:00
Օքսֆորդ - Լանս	21:00
Պարսիա - Լիոն	21:00
Կէնկան - Նանթ	21:00
Լիլ - Լը Մանս	21:00
Մէս - Ռէն	21:00
●ՎԱԳԸ	
Մոնաքո - Սթրասպուրկ	21:45

### ՄՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ՎԱՂԸ՝ ՌԷԱԼ ՄԱՏՐԻՏ - ՏԵՓՈՐԹԻՍ ՔՈՐՈՒՆԱ

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 16րդ հանգրուանի մրցումներուն, ընդհանուր դասարանի պարագլուխի դիրքը գրաւող Ռէալ Մատրիտ, վաղը՝ Կիրակի, իր դաշտին՝ «Սանթիակո Պէրնալե»ի մէջ կարեւոր մրցում մը ունի կատարելիք, երբ հիւրընկալէ Տեփոթիօ Քորուսան: Այս վերջինը, որ կը գրաւէ 3րդ դիրքը, երբ կէտով ետ կը մնայ մայրաքաղաքի կազմին:

Պարսելոնա քաղաքի տերպիին, Էսփանիոլ, որ կը գրաւէ ընդհանուր դասարանի վերջին դիրքը, իր դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Պարսելոնան:

Ստորեւ՝ 16րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրութի ժամով).

●ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Էսփանիոլ - Պարսելոնա	20:30
Վիարէալ - Ռէալ Մատրիտ	22:30
Սելթա Վիլո - Աթլետիքո Մատրիտ	22:30
●ՎԱԳԸ	
Ռէալ Պէթիս - Վալենսիա	18:00
Մալախա - Մայորքա	18:00
Ռասիլ Սանթանտեր - Օսասունա	18:00
Ռէալ Վալադոլիտ - Մուրսիա	18:00
Ռէալ Մարսիլոս - Ալպասերթ	18:00
Ռէալ Մատրիտ - Տեփ. Քորուսա	20:00
Աթլետիքո Պիլասո - Սելիլլա	22:00

### ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ԱՅՍՕՐ՝ ՄԱՆՉԵՍԹԵՐԻ ՔԱՂԱԿԻ ՏԵՐՊԻՆ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 16րդ հանգրուանի մրցումներուն, հետաքրքրական պիտի ըլլայ Մանչեսթըր քաղաքի տերպիին, որուն ընթացքին Եունայթըտ «Օլտ Թրէֆորտ»ի մէջ պիտի հիւրընկալէ Սիթին:

Պարսելոնայի դիրքը գրաւող Չելսի, որ այժմ երկու կէտի առաւելութիւն մը ունի 3րդ դիրքը գրաւող Մանչեսթըր Եունայթըտի վրայ, իր կարգին իր մրցումը պիտի կատարէ իր դաշտին՝ «Սթէմֆորտ Պրիճ»ի մէջ, ուր պիտի հիւրընկալէ Պորթսմութը:

Յարդ անպարտելի միակ խումբը՝ Արսենալ, որ այժմ միայն մէկ կէտի տարբերութեամբ ետ կը մնայ Չելսիէն, վաղը՝ Կիրակի «Հայպերի»ի մէջ պիտի հիւրընկալէ Պիլթալընը:

Ստորեւ՝ 16րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրութի ժամով).

●ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Լայպըր Սիթի - Պիլթալըն	14:00
Մանչ. Եունայթըտ - Մանչ. Սիթի	14:30
Չելսի - Պորթսմութ	17:00
Լիվրփոլ - Սաութհեմթըրն	17:00
Միտլըլդսթրո - Չարլթըն	17:00
Նիքիթալ - Թոթենհամ	17:00
Փորթսմութ - Էվըրթըն	17:00
●ՎԱԳԸ	
Ասթոն Վիլա - Վուլվ	14:00
Արսենալ - Պիլթալըն	16:00
Լիժ - Ֆուլհէմ	18:00

